



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌՈՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № _____/21**

11.03.2021թ.

ք. Երևան

Քաղաքացի Գևորգ Կոստանյանը (այսուհետ նաև՝ Դիմող) թիվ ԵՇԴ/1236/06/19 քրեական գործի շրջանակներում դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 202-րդ հոդվածի 1-ին մասի, 259-րդ հոդվածի 2-րդ մասի, 394-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Սահմանադրությանը (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) համապատասխանության հարցով:

Դիմողի փաստարկներն ու հիմնավորումները հիմնականում հանգում են հետևյալին.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 259-րդ հոդվածի 2-րդ մասի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի կապակցությամբ Դիմողը գտնում է, որ դիտարկվող դրույթները չեն համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչի արդյունքում ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ դատարանների իրավակիրառ պրակտիկայում նշյալ դրույթներին տրվել է սխալ մեկնաբանություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ Դիմողը գտնում է, որ դիտարկվող դրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջներին, ինչի արդյունքում ՀՀ հատուկ քննչական ծառայության և ՀՀ դատարանների իրավակիրառ պրակտիկայում նշյալ դրույթին տրվել է սխալ մեկնաբանություն:

Դիմողի կարծիքով՝ իրավական անորոշության պատճառով դիտարկվող դրույթին տրված մեկնաբանության սխալն այն է, որ վերաքննիչ դատարանն իրեն վերապահել է առաջին ատյանի դատարանի՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտը պատճառաբանելու իրավասություն (վերաքննիչ դատարանն առաջին ատյանի դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ՝ պատճառաբանել է անփոփոխ թողնված դատական ակտը՝ արձանագրելով, որ առաջին ատյանի դատարանը թեև սխալ է պատճառաբանել դատական ակտը, այնուամենայնիվ, կայացրել է գործը ճիշտ լուծող դատական ակտ):

ՀՀ Սահմանադրական դատարանը անհատական դիմումի ընդունելության մասին 07.12.2020թ. աշխատակարգային որոշմամբ գտել է, որ դիմումը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Սահմանադրական

դատարանի կողմից ենթակա է մերժման, քանի որ առկա է Սահմանադրական դատարանի 04.09.2019թ. ՍԴՈ-1476 որոշումը:

Մնացած դրույթների մասով, ըստ աշխատակարգային որոշման, առկա չեն գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածներով նախատեսված հիմքերը:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Սույն սահմանադրական վեճի շրջանակներում անհրաժեշտ է անդրադառնալ ստորև շարադրված հարցադրումներին՝ ՀՀ Սահմանադրության քննարկվող դրույթներին համապատասխանության տեսանկյունից:

1. Այսպես, արդյո՞ք առերևույթ ենթադրյալ հանցագործություններ կատարած անձանց կողմից վկայի կարգավիճակով տրված ընդհանուր բնույթի մեկ ցուցմունքը կարող է գնահատվել որպես հիմնավոր կասկածը հաստատող՝ օրենքով սահմանված կարգով ձեռք բերված ապացույց:

1.1. Վալանավորման առնչությամբ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:»

Համաձայն ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

(...)

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող ապացույցի օգտագործումն արգելվում է:»

Համաձայն ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի.

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:»

Համաձայն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (հետայսու՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

(...)

գ. անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:»

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 9-րդ հոդվածի համաձայն.

«1. Յուրաքանչյուր մարդ ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոք չի կարող ենթարկվել քննադատման կամ կալանքի տակ պահվելու: Ոչ ոք չպետք է զրկվի ազատությունից այլ կերպ, քան այնպիսի հիմքերով և այնպիսի ընթացակարգին համապատասխան, որոնք սահմանված են օրենքով:»

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի.

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր

ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:»

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական համակարգում **«հիմնավոր կասկած»** հասկացությունը անձանց անձնական ազատությունը սահմանափակելու հարցում թեև ունի առանցքային նշանակություն (մասնավորապես՝ նախնական քննության կամ դատական քննության փուլում կալանքի հարցը քննարկելիս), այնուամենայնիվ այն, որպես այդպիսին, որպես քրեադատավարական եզրույթ, սահմանված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում: Այլ կերպ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը չի պարունակում միանշանակ ձևակերպում առ այն՝ ինչ է հիմնավոր կասկածը, ապացույցների ինչ քանակական և որակական հարաբերակցության հիման վրա է հնարավոր հաստատված համարել հիմնավոր կասկածի առկայությունը: Միաժամանակ, հիմնավոր կասկածը հանդիսանում է կալանավորման կիրառման հիմնական պայմանը, որի առկայությունը հաստատված համարելուց հետո է միայն իրավաչափ քննարկել կալանավորման հիմքերի առկայության հարցը:

«Հիմնավոր կասկած» եզրույթը գործնականում իր մեկնաբանությունն է ստացել Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում: Այսպես.

Վճռաբեկ դատարանը Վ. Գևորգյանի վերաբերյալ 2011 թվականի փետրվարի 24-ի թիվ ԵԿԴ/0678/06/10 որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«[Ա]նձի կալանավորումը կհամարվի օրինական և հիմնավորված միայն այն դեպքում, երբ հաստատվի

ա) անձի առնչությունն իրեն մեղսագրվող հանցագործությանը (հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը) և

բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի առկայությունը:

(...)

Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Կալանավորման պայմանների թվում հատուկ կարևորություն ունի անձի կողմից իրեն վերագրվող հանցագործությունը կատարած լինելու հիմնավոր կասկածը, որի առկայությունը հավաստելուց հետո միայն հնարավոր է անդրադառնալ կալանավորման հիմքերին: Ավելին, եթե առկա չէ անձի կողմից հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված՝ կալանավորման հիմքերի առկայության հարցի քննարկումն այլևս անիմաստ է:

(...)

20. Մեկնաբանելով անձի ազատության սահմանափակման համար անհրաժեշտ պայմանը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածը, Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձին ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավոր կասկած առ այն, որ նա իրավախախտում է կատարել, ընդ որում՝ յուրաքանչյուր դեպքում կասկածը պետք է լինի ողջամիտ:

Վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը հիմնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վրա, որի համաձայն՝ կալանքի հիմնավորվածության կարևոր տարրերից են կասկածների արժանահավատությունն ու բարեխղճությունը (տե՛ս Մյուրեյն ընդդեմ Միացյալ Թագավորության (MURRAY v. THE UNITED KINGDOM) 1994թ. հոկտեմբերի 28-ի վճիռը, գանգատ թիվ 14310/88, կետ 61):

21. Դիրքորոշում սահմանելով այն մասին, որ կասկածը պետք է լինի ողջամիտ՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ «հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկած» ձևակերպումը չի ենթադրում, որ մեղադրյալի մեղավորությունը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ունենալ հանցանքը տվյալ անձի կողմից կատարված լինելու բավարար ապացույցներ, ինչն ավելի բարձր ապացուցողական չափանիշ է: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ կասկածը հիմնավոր կհամարվի նաև ենթադրյալ հանցագործության հետ կասկածվող անձի օբյեկտիվ կապը հաստատող որոշակի տեղեկությունների ու փաստերի առկայության դեպքում, ընդ որում՝ անհրաժեշտ է ունենալ նաև բավարար հիմքեր՝ եզրակացնելու, որ դեպքը, իրադարձությունը համընկնում է այն ենթադրյալ հանցանքին, որի կատարման մեջ անձը կասկածվում է: Այլ կերպ՝ կասկածը կարող է համարվել հիմնավոր միայն այն դեպքում, երբ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդություն ներկայացնող պաշտոնատար անձը՝ քննիչը կամ դատախազը, կասկածվող անձի կատարած գործողությունների (անգործության) վերաբերյալ կներկայացնի տեղեկություններ, փաստեր կամ ապացույցներ, որոնք ուղղակիորեն կմատնանշեն

նրա առնչությունն իրեն վերագրվող ենթադրյալ հանցագործությանը, ինչպես նաև կհիմնավորեն, որ

դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցանքի դեպքին:

(...)

23. Ընդհանրացնելով սույն որոշման 17-22-րդ կետերում շարադրված վերլուծությունը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ազատությունից զրկելու համար անհրաժեշտ է հիմնավորված ողջամիտ

ենթադրությունն առ այն, որ անձը հանցանք է կատարել, ինչպես նաև առկա են մեղսագրվող արարքի իրական լինելը հավաստող բավարար ապացույցներ: Այդ կասկածները պետք է հիմնված լինեն օրենքով սահմանված կարգով ձեռք բերված որոշակի փաստական տվյալների վրա, որոնք պետք է պատշաճ իրավական ընթացակարգի սահմաններում հետազոտվեն դատական քննության ընթացքում: Դատարանի հետևությունները հիմնավոր կասկածի առկայության կամ բացակայության վերաբերյալ պետք է լինեն հիմնավորված և պատճառաբանված»:

Վերը մեջբերված դիրքորոշումը Վճռաբեկ դատարանը վերահաստատել է մի շարք այլ նախադեպային որոշումներում:

Հիմնավոր կասկածի կառուցակարգին առավել ընդհանրական կերպով Վճռաբեկ դատարանը անդրադարձել է նաև Գագիկ Միքայելյանի վերաբերյալ 2009թ. դեկտեմբերի 18-ի թիվ **ԵԱԴԴ/0085/06/09** որոշմամբ.

*«[Ա]նձին կալանավորելու միջնորդությունը կարող է բավարարվել այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրած քրեական հետապնդման մարմնին հաջողվի **դատարանի համար համոզիչ հիմնավորել**. ա) անձին մեղսագրվող հանցագործությանը նրա առնչությունը (տվյալ **հանցագործության կատարման մեջ հիմնավոր կասկածը**) և բ) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի **135-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված հիմքերից որևէ մեկի** կամ մի քանիսի առկայությունը»:*

Քննարկվող համատեքստում հարկ է անդրադառնալ նաև դատական ակտերի պատճառաբանվածության պահանջին՝ ըստ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների: Ֆրունզիկ Գալստյանի վերաբերյալ 2010 թվականի մարտի 26-ի թիվ **ԵԿԴ/0058/11/09** որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է.

«[Մ]ինչդատական վարույթն իրականացնող մարմնի որոշումների և գործողությունների օրինականության և հիմնավորվածության ստուգման արդյունքում դատարանների կողմից օրինականությունից շեղվող, չհիմնավորված, չպատճառաբանված կամ ոչ պատշաճ պատճառաբանված որոշումների կայացումն անընդունելի է:

18. Դատական ակտն օրինական է, եթե կայացվել է գործող օրենսդրության պահանջների պահպանմամբ, և հիմնավորված՝ եթե դրանում արված հետևությունները հիմնված են դատական քննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա: Դատական ակտի պատճառաբանվածությունը կոչված է պարզաբանելու, թե ինչու է դատարանը եկել այս կամ այն հետևության, որ իրավանորմերով է դեկավարվել նման որոշում կայացնելիս և միևնույն ժամանակ հնարավորություն է ստեղծում վերադաս դատարանի կողմից դատական ակտի օրինականության և հիմնավորվածության ստուգման համար»:

Աննա Հարությունյանի վերաբերյալ 2012 թ. նոյեմբերի 1-ի թիվ ԵՇԴ/0110/01/11 որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է.

«Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ դատական ակտի եզրափակիչ մասում առկա եզրահանգումները պետք է բխեն նույն դատական ակտի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված հետևություններից և համապատասխանեն դրանց: Հետևաբար, վերաքննիչ դատարանի կողմից կայացվող՝ վերաքննիչ բողոքը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ որոշման եզրափակիչ մասում առկա եզրահանգումը նույնպես պետք է համապատասխանի նկարագրական-պատճառաբանական մասում շարադրված վերլուծությանը:»:

ՀՀ քրեական դատավարության սկզբունքների բաժնում զետեղված մրցակցային դատավարության սկզբունքի դրույթները հավասարապես գործում են ինչպես դատական, այնպես էլ մինչդատական վարույթի փուլերում: Հետևաբար՝ արդար դատաքննության հիմնարար-իրավական երաշխիքները կիրառելի են մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ: Այդ թվում՝ դատական ակտերի պատճառաբանության մասով (ներառյալ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս):

Ընդհանրացնելով վերը ներկայացված իրավական դիրքորոշումները փաստում ենք, որ կալանավորումը ամենախիստ խափանման միջոցն է, քանի որ այն ենթադրում է անձի իրավունքների և հիմնարար ազատությունները լայնածավալ սահմանափակումներ: Հաշվի առնելով վերոգրյալը՝ քրեադատավարական սկզբունքները և սկզբունքների էությունն ու բովանդակությունը արտացոլող իրավական կարգավորումները, ինչպես նաև այդ կարգավորումներին դատական պրակտիկայում տրված մեկնաբանությունները կալանավորման կիրառման համար սահմանել են բարձր սանդղակ: Մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմինը նախ պետք է հիմնավորի, որ առկա է հիմնավոր կասկած առ այն, որ անձը կատարել է իրեն վերագրվող արարքը, ապա մատնանշի քրեադատավարական այն հիմքը, որի ուժով անձը ենթակա է կալանավորման (մեջբերվածը կատարելով հարուցված քրեական գործի և առաջադրված մեղադրանքի առկայության պայմաններում):

Հիմնավոր կասկածը հաստատված համարելու համար անհրաժեշտ է ապացուցողական այնպիսի զանգված, որը թույլ կտա հաստատել անձի և ենթադրյալ արարքի միջև առկա օբյեկտիվ կապ: Այլ կերպ՝ ինչպես արձանագրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, նման կասկածը պետք է լինի բարեխիղճ և արժանահավատ:

Մինևույն ժամանակ, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հիմքում ընկած փաստական հանգամանքների քանակական վերլուծություն Վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կատարված չէ: Այսինքն՝ հնարավոր չէ նշել ապացույցների այնպիսի քանակական շեմ, որը բոլոր քրեական գործերի պարագայում կիրառելի կլինի՝ հաստատված համարելու հիմնավոր կասկածի

առկայությունը: Ավելին՝ սահմանված չէ նաև այնպիսի միանշանակ սանդղակ, որը հնարավորություն կտա վեր հանել նման հարաբերակցություն (օրինակ՝ մեկ իրեղեն ապացույց, երկու ցուցմունք կամ այլն):

Կարծում ենք, որ նշված մոտեցումը, ցուցաբերված դատական ատյանների կողմից, արդարացված և իրավաչափ է, քանի որ համընդհանուր չափանիշ բոլոր քրեական գործերի համար գոյություն ունենալ չի կարող:

Հակառակի տրամաբանությունից առաջադրված հարցադրմանը մոտենալիս պարզ է դառնում, որ առկա չէ նաև նվազագույն քանակական շեմ կամ այդպիսի շեմի արգելք: Շարադրյալից հետևում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը կամ քննարկվող իրավակարգավորումների վերաբերյալ առկա նախադեպային կարգավորումները չեն նախատեսում ուղղակի և անվերապահ արգելք առ այն, որ մեկ ապացույցի հիման վրա անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվել չի կարող:

Քննարկվող հարցի առնչությամբ, սակայն, հարկ է նկատել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածը, որը, ի թիվս այլնի, թվարկում է ապացույցների տեսակները, նախատեսում է ապացույցի 10 տեսակ, որոնք իրենց աղբյուրներով, հավանական տեղեկություններով, ամրագրման ձևով և բովանդակությամբ կարող են լինել շատ տարբեր: Սա է պատճառներից մեկը, որ ապացույցները, ամեն դեպքում, ենթակա են քննարկման վերաբերելիության, թույլատրելիության և արժանահավատության տեսանկյուններից:

Թեև վարույթն իրականացնող մարմնի ներկայացուցչի համար սահմանված չէ արգելք՝ անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին միջնորդությանը կից որպես հիմնավոր կասկածը հաստատված համարելու համար անհրաժեշտ և բավարար ապացուցողական զանգված ներկայացնել մեկ ապացույց, այնուամենայնիվ ներկայացված փաստական տվյալների գնահատումը գտնվում է դատարանի տիրույթում: Դատարանը պետք է գնահատի՝ արդյոք ներկայացված մեկ փաստական տվյալը հիմնավորում է, որ անձը առնչություն ունի իրեն վերագրվող արարքին, ինչպես նաև դեպքը, որի կատարման մեջ անձը կասկածվում է, համընկնում է իրեն վերագրվող հանցադեպին:

Մեր ընդհանրական նկատառումն է այն, որ, օրինակ, քննարկման առարկա դարձնելիս *վկայի ցուցմունք* ապացույցի տեսակը, քննարկելով այն արժանահավատության տեսանկյունից, քիչ հավանական է, որ ընդամենը մեկ վկայի մեկ ցուցմունքը բավարար կարող է համարվել անձի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս: Այս նկատառումը կատարելիս հաշվի է առնվում այն, որ ապացույցը ստացվում է սուբյեկտիվ աղբյուրից, վկան օբյեկտիվորեն կարող է շահագրգռված լինել գործի ելքով, ունենալ անձնական որևէ հարաբերություն կամ կապ ենթադրյալ արարքը կատարած անձի հետ և այլն:

Միևնույն ժամանակ, սակայն, փորձագետի մեկ եզրակացությունը կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս կարող է դիտվել որպես բավարար: Ամեն դեպքում

յուրաքանչյուր ապացույց խիստ անհատական է և ամեն առանձին դեպքում կարիք ունի գնահատման:

Ընդ որում, մինչդատական վարույթի ընթացքում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցը քննարկելիս ապացույցների այն շրջանակը, որը վարույթն իրականացնող մարմնի գնահատմամբ հիմք պետք է հանդիսանա անձի ազատությունը սահմանափակելու, ներկայացվում է հենց վարույթն իրականացնող մարմնի կողմից: Այսինքն՝ վերջիններս ունեն հայեցողություն ներկայացնելու բացառապես, ըստ իրենց, կալանավորման անհրաժեշտությունը հիմնավորող ապացույցները: Մինչդեռ դատական քննության փուլում, երբ նախաքննության ավարտին պաշտպանության կողմը արդեն իսկ ծանոթացել է քրեական գործի նյութերին, իրավիճակը որոշակիորեն հավասարակշռվում է:

Հարկ է նկատել նաև, որ ապացույցների անհրաժեշտ սանդղակի միանշանակ չափանիշ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով չնախատեսելը իրավաչափ մոտեցում է և չի հակասում իրավական որոշակիության կառուցակարգին: Հակառակ պարագայում քրեական գործերի անհատականացումը, դրանցից յուրաքանչյուրին առանձնակի մոտեցում ցուցաբերելը գործնական կդառնար գրեթե անհնար՝ անկյունաքար դարձնելով բացառապես անհրաժեշտ ապացույցների քանակական շեմը բավարարելը:

Այսպիսով՝ ամփոփելով վերը ներկայացված իրավական կարգավորումները և վերլուծությունը փաստում ենք, որ մեկ ապացույցի հիման վրա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելը ուղղակիորեն արգելված չէ: Այնուամենայնիվ ամեն կոնկրետ դեպքում այդ ապացույցի բնույթը, ապացուցողական զանգվածը, դրան բնութագրական այլ հատկանիշները ենթակա են ստուգման և պարզման դատարանի կողմից:

1.2. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու առնչությամբ

Վերը շարադրված հարցադրումը՝ կապված ապացույցների քանակի հետ, Դիմումատուն ներկայացնում է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի վերաբերյալ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի.

«20) մեղադրանք՝ սույն օրենսգրքով նախատեսված կարգով ներկայացված հիմնավորում՝ որոշակի անձի կողմից քրեական օրենսգրքով չթույլատրված կոնկրետ արարքի կատարման մասին:»

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի.

«1. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմքը նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունն է:

2. Սույն հոդվածի առաջին մասում նախատեսված հիմքերի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

3. Որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում են մեղադրյալի անունը, ազգանունը և նրա անձի մասին այլ տվյալներ,

մեղադրանքի ձևակերպումը՝ նշելով հանցագործության տեղը, ժամանակը, եղանակը և մյուս հանգամանքները, որքանով դրանք պարզված են գործի նյութերով: Եզրափակիչ մասում շարադրվում է անձին գործով որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշումը և քրեական օրենսգրքի հոդվածը, հոդվածի մասը կամ կետը, որով նախատեսված է կատարված հանցանքի համար պատասխանատվությունը:

4. Եթե անձը որպես մեղադրյալ ներգրավվում է քրեական օրենսգրքի տարբեր հոդվածներով, հոդվածի տարբեր մասերով կամ կետերով որակվող մի քանի հանցագործությունների համար, որոշման նկարագրական-պատճառաբանական մասում նշվում է կոնկրետ ինչ հանցանքներ են կատարվել, իսկ եզրափակիչ մասում՝ այդ հանցագործությունների համար պատասխանատվություն նախատեսող հոդվածները, հոդվածի մասերը կամ կետերը:

(...):»

Անդրադառնալով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածին՝ Վճռաբեկ դատարանը Արմեն Բաղդասարյանի վերաբերյալ 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ԵԱԲԴ/0009/11/13 որոշմամբ արձանագրել է.

«15. Անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշմամբ նախաքննական մարմինն արձանագրում է գործի քննության տվյալ փուլում իր մոտ առկա ենթադրությունն այն մասին, որ մեղադրյալը կատարել է նրան մեղսագրվող հանցանքը, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասում առկա՝ «բավարար ապացույցների համակցություն» ձևակերպումը նշանակում է, որ գործի քննության տվյալ փուլում վարույթն իրականացնող մարմնի կողմից ձեռք են բերվել ապացույցներ, որոնք բավարար են անձին որպես մեղադրյալ ներգրավելու և ոչ թե հանցանքի կատարման մեջ նրա մեղքը հաստատված համարելու համար: Հետևաբար, անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քրեական հետապնդման մարմնի որոշումը հանցանքի կատարման մեջ անձի մեղավորությունը հաստատող վերջնական փաստաթուղթ չէ:»

Մեկ այլ՝ Արկադի Պապյանի վերաբերյալ 2010 թվականի նոյեմբերի 5-ի թիվ ՏԴ/0115/01/09 նախադեպային որոշմամբ Վճռաբեկ դատարանը նշել է.

«18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ և 270-րդ հոդվածների վերլուծությունից երևում է, որ օրենսդիրը երկու դեպքում էլ օգտագործել է «մեղադրանքի ձևակերպում» եզրույթը, որի կառուցվածքն իրենից ներկայացնում է.

ա) գործով հաստատված, հանրության համար վտանգավոր և հակահրավական փաստերը, որոնք համապատասխանում են կոնկրետ հանցակազմի հատկանիշներին,

բ) քրեական օրենքի կոնկրետ նորմը, որի հատկանիշներին համապատասխանում են մեղադրյալի գործողությունները կամ անգործությունը կազմող փաստերը:

Վերոնշյալ դատողության հիման վրա Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ մեղադրանքի ձևակերպումը պետք է արտացոլի մեղսագրվող գործողությունների կամ անգործության բովանդակությունը, հետևաբար պետք է ներառի հանցակազմի բոլոր պարտադիր հատկանիշները բնութագրող փաստական տվյալները: Փաստական տվյալների ներառումն անհրաժեշտ նախապայման է, որպեսզի մեղադրանքի մեջ նշվի այն քրեական օրենքը, որով նախատեսված են հանրության համար փտանգավոր, հակաիրավական և քրեորեն պատժելի արարքի հատկանիշները, այսինքն՝ հանգեցնի մեղադրանքում ձևակերպված արարքին համապատասխան իրավաբանական գնահատական տալուն:

19. Վճռաբեկ դատարանի կողմից մեղադրանքի ձևակերպման կարևորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ համապատասխան դատավարական փաստաթղթերում (անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշում, մեղադրական եզրակացություն) դրա առկայությունը հնարավորություն է տալիս քրեական հետապնդման ենթարկվող անձին արդյունավետ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը: Ավելին, մեղադրական եզրակացության մեջ շարադրվող առանձին հարցեր (արարքի փաստական նկարագրության հիմքում դրված ապացույցների շրջանակը, դրանց տրված գնահատականը, դատակոչի ենթակա անձանց շրջանակը և այլն) էական նշանակություն ունեն անձի պաշտպանության իրավունքի պատշաճ իրականացման համար:»

Մեղադրանքի կառուցակարգը Վճռաբեկ դատարանը քննարկել է նաև Գևորգ Ճուղուրյանի և այլոց վերաբերյալ 2012 թվականի օգոստոսի 24-ի որոշմամբ՝ արձանագրելով.

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի նպատակների իրացման առումով մեղադրանքը բնորոշվում է որպես լիազորված պետական մարմնի կողմից անձին արված պաշտոնական ծանուցում այն մասին, որ հիմքեր կան պնդելու, թե նա քրեական հանցանք է գործել (տե՛ս *Eckle v. Germany*, 1982 թվականի հուլիսի 15-ի վճիռը, կետ 73):

(...)

15. Հիմք ընդունելով սույն որոշման նախորդ կետում մեջբերված իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ

մեղադրանքը հանդիսանում է քրեադատավարական այն ինստիտուտը, որի միջոցով ապահովվում է հանրային քրեական հետապնդման կառուցակարգի գործունեությունը: Մեղադրանքը հանցակազմը կոնկրետ հանցագործության հանգամանքների և այն կատարած անձի հետ կապող դատավարական միջոցն է և այդ պատճառով էլ մեղադրանքը կարելի է դիտարկել որպես հանցակազմի հատկանիշների դատավարական արտահայտություն, որից ածանցյալ է նաև քրեական արդարադատության իրականացման գործառույթը:

Քրեական դատավարությունում մեղադրանքը բնորոշվում է որպես կոնկրետ անձին մեղսագրվող հանցավոր գործողության կամ անգործության նկարագրություն դատավարական փաստաթղթերում: Կառուցվածքային առումով մեղադրանքը բաղկացած է գործով հաստատված՝ հանրության համար վտանգավոր և հակաիրավական արարքի կատարման հանգամանքների ամբողջությունից և քրեական օրենքի կոնկրետ նորմից, որի հատկանիշներին համապատասխանում է նշված փաստական հանգամանքների ամբողջությունը: Այլ խոսքով՝ մեղադրանքի տարրեր են կազմում մեղադրանքի ձևակերպումը և դրա իրավաբանական որակումը:

(...)

[մ]եղադրանքի ամրագրումը հանդիսանում է այն դատավարական միջոցը, որով ապահովվում է քրեական հետապնդման ենթարկվող անձի իրավունքը տեղեկանալու իր դեմ առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին: Ուստի, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջների բացահայտման հարցը պետք է քննարկել արդար դատաքննության հիմնարար իրավունքի համատեքստում:

Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումը բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքից: Մասնավորապես, եվրոպական դատարանը բազմիցս շեշտել է, որ այն հարցը, թե արդյոք կոնկրետ գործով մեղադրյալին բավարար տեղեկատվություն տրամադրվել է առաջադրված մեղադրանքի իրավական և փաստական հիմքերի մասին, պետք է միշտ ուսումնասիրվի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ արդար դատաքննության իրավունքի համատեքստում (տե՛ս *Deweere v. Belgium*, 1980 թվականի փետրվարի 27-ի վճիռը, կետ 56, *Artico v. Italy*, 1980 թվականի մայիսի 13-ի վճիռը, կետ 32, *Goddi v. Italy*, 1984 թվականի ապրիլի 9-ի վճիռը, կետ 28, *Colozza v. Italy*, 1985 թվականի փետրվարի 12-ի վճիռը, կետ 26):

(...)

21. Սույն որոշման նախորդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո գնահատելով մեղադրանքի ձևակերպմանը բովանդակային առումով ներկայացվող պահանջները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ դրանում, բացի հանցավորի մասին տվյալներից, հանցագործության տեղից, ժամանակից և եղանակից, մանրամասնորեն և հստակ պետք է նշվեն արարքի քրեաիրավական որակման հիմքում ընկած փաստերը՝ հանցագործության դեպքի և դրա հետ կապված հանգամանքների մանրակրկիտ նկարագրությունը: Արդար դատաքննության հիմնարար իրավունքի իրացման առումով անընդունելի է, երբ իրավասու պաշտոնատար անձը համապատասխան դատավարական փաստաթղթերում մեղադրանքը ձևակերպելիս սահմանափակվի միայն քրեական օրենքով արգելված արարքի ընդհանրական նկարագրությամբ:

(...)

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նշված պահանջների պահպանմամբ մեղադրանքը ձևակերպելու դեպքում միայն առաջադրված մեղադրանքը հնարավորություն կտա մեղադրյալին պատշաճ կերպով իրականացնել իր պաշտպանության իրավունքը, ինչպես նաև կապահովվի կողմերի դատավարական իրավահավասարությունը՝ սեփական դիրքորոշումը հիմնավորելու և մյուս կողմի փաստարկները հերքելու համար: Նշված սկզբունքներից ցանկացած շեղում կհանգեցնի արդար դատաքննության հիմնարար արժեքի առարկայազրկման:»

Այսպիսով՝ վերաբերելի նորմատիվային կարգավորումները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումները թույլ են տալիս պնդել, որ մեղադրանքը անձի և ենթադրյալ հանցավոր արարքի միջև առկա իրավական կապն է: Այդ կապի՝ անձին հայտնի դառնալը գրավականն է վերջինիս կողմից իր պաշտպանության իրավունքի լիարժեք իրացման, քանի որ հնարավոր չէ պատկերացնել անձի պաշտպանությունը անհայտ մեղադրանքից:

Մեղադրանքին առաջադրվող պահանջներից է դրա հստակությունը, դետալայնությունը: Մեղադրանքը պետք է ձևակերպված լինի այն կերպ, որ անձը, այդ թվում արհեստավարժ իրավաբանական աջակցություն ստանալով, ի վիճակի լինի կազմակերպել իր պաշտպանությունը: Թեև որպես մեղադրյալ ներգրավելու, մեղադրանք առաջադրելու փուլում ապացուցողական սանդղակը չի կարող նույնացվել մեղադրական դատավճիռ կայացնելու ապացուցողական սանդղակի հետ, այն պետք է լինի հստակ, նկարագրի հանցագործության չորս տարրերը, անձի մասնակցությունը ենթադրյալ հանցավոր արարքի կատարմանը: Այլ խոսքով՝ ՀՀ քրեական օրենսգրքի որևէ հոդվածի տեսական, մեխանիկական վերարտադրում չի կարող համարվել իրավաչափ նախապայման անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար: Մեղադրանքը պետք է կառուցված լինի կոնկրետ անձի կոնկրետ գործողությունների վրա:

Անդրադառնալով այն ապացուցողական ծավալին, որը պետք է դրված լինի մեղադրանքի հիմքում, փաստում ենք, որ ապացուցողական այդ զանգվածը պետք է դիտարկել ոչ թե առանձին, այլ մեղադրանքի հասկացության և դրան տրված մեկնաբանությունների սահմաններում: Մասնավորապես՝ արդյո՞ք մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները թույլ են տալիս հաստատել անձի և արարքի միջև օբյեկտիվ կապը, վեր հանել նրա գործողությունները, ցույց տալ հանցակազմի չորս տարրերի առկայությունը:

Ինչպես և կալանավորման պարագայում, ապացույցների քանակական բնութագիրը և դրա համար նախատեսված նվազագույն և առավելագույն շեմերը ո՛չ օրենսդրությամբ, ո՛չ Վճռաբեկ դատարանի և ո՛չ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում հստակ ամրագրված չեն:

Հետևաբար և առկա չէ արգելք մեղադրանքի հիմքում մեկ ապացույց դնելու:

Նման պարագայում, սակայն, հարցը վերաբերում է այլ ասպեկտի՝ այն է՝ ապացույցի բովանդակությանը: Տեսականորեն հնարավոր է պատկերացնել իրավիճակ, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 104-րդ հոդվածում թվարկված ապացույցի տեսակներից մեկը իր տարողունակությամբ, բովանդակայնությամբ, արժանահավատությամբ և այլ հատկանիշներով ինքնին անհրաժեշտ և բավարար լինի մեղադրանք առաջադրելու, անձին որպես մեղադրյալ ներգրավելու համար:

Միևնույն ժամանակ գործնականում նման մոտեցումը կարող է որոշակիորեն խնդրահարույց լինել անձի իրավունքների և հիմնարար ազատությունների տեսանկյունից: Մեկ ապացույցը գործնական բավարար որակելու համար մեծ նշանակություն ունի այն արարքը, որի կատարումը վերագրվում է անձին: Կախված առանձին հանցակազմերի առանձնահատկություններից՝ որոշ դեպքերում պարագայում առավել բարձր հավանականություն ունի այն, որ մեկ ապացույցի հիման վրա առաջադրված մեղադրանքը կլինի իրավաչափ:

Այսպիսով՝ ինչպես և կալանավորման պարագայում, շեշտադրումը և անկյունաքարը ոչ թե ապացույցի քանակական բնութագիրն է, այլ դրա որակական հատկանիշը, դրանում ամրագրված տեղեկությունները, ապացուցողական զանգվածը և նշանակությունը, ինչը, ամեն դեպքում, ենթակա է գնահատման: Օրենսդրական ուղղակի արգելքի բացակայությունը չպետք է մեկնաբանվի որպես գործիք՝ անձանց իրավունքները անհարկի սահմանափակելու: Մեկ ապացույցի հիման վրա մեղադրանքի առաջադրումը իրավաչափ է, երբ այդ մեկ ապացույցը, որպես այդպիսին, ինքնին, բավարար է դատավարական այդ փուլի չափանիշը հաղթահարելու համար:

Գիտավերլուծական կենտրոնը գտնում է, որ Գևորգ Կոստանյանի հետ կապված քրեական գործով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները սխալ մեկնաբանությամբ կիրառելը բավարար չէ այդ նորմը Սահմանադրությանը հակասող ճանաչելու համար, քանի որ վճռաբեկ դատարանը նշված նորմի կիրառման վերաբերյալ արտահայտել է իր դիրքորոշումը:

2. Արդյո՞ք կալանավորման հարցը որոշելիս դատարանի տրամադրության տակ գտնվող տվյալները կարող են գնահատվել մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու եղանակով, թե դրանք պետք է գնահատման ենթարկվեն համակցության մեջ նաև այլ տվյալների հետ, որոնք բացառում են մեղադրյալի առնչությունը մեղսագրված արարքներին:

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

(...)

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով:»

Համաձայն ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի.

«1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

(...)

3. Հիմնական իրավունքների խախտմամբ ձեռք բերված կամ արդար դատաքննության իրավունքը խաթարող սպացույցի օգտագործումն արգելվում է:»

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի.

«1. Դատարանը, դատախազը, քննիչը կամ հետաքննության մարմինը խափանման միջոց կարող են կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով.

3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք.

4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց.

5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

2. Կալանավորումը մեղադրյալի նկատմամբ կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի

հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն:»

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 136-րդ հոդվածի.

«1. Խափանման միջոցը կիրառվում է դատարանի, դատախազի, քննիչի կամ հետաքննության մարմնի որոշմամբ: Խափանման միջոց կիրառելու մասին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշումը պետք է լինի պատճառաբանված, բովանդակի մեղադրյալին կամ կասկածյալին վերագրվող հանցագործության մասին նշումներ և համապատասխան խափանման միջոց ընտրելու անհրաժեշտության մասին հիմնավորում: Գրավը որպես խափանման միջոց ընտրելու մասին որոշում կայացնելու դեպքում քրեական վարույթն իրականացնող մարմինը որոշման մեջ նշում է գրավի գումարի չափը կամ գրավի առարկան:

2. Կալանավորումը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ՝ մինչդատական վարույթում քննիչի կամ դատախազի միջնորդությամբ, իսկ դատարանում քրեական գործը քննելիս՝ մեղադրանքի կողմի միջնորդությամբ կամ դատարանի նախաձեռնությամբ:»

ՀՀ քրեական դատավարության համակարգում կալանքը որպես խափանման միջոց ընտրվում է վարույթն իրականացնող մարմնի հիմնավոր և պատճառաբանված որոշման հիման վրա: Որոշմամբ վարույթն իրականացնող մարմինը միջնորդություն է հարուցում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ՝ հասցեագրելով այն դատարանին:

Որոշմանը կից վարույթն իրականացնող մարմինը դատարան է ներկայացնում նաև այն ապացույցները, որոնք, ըստ նրա, բավարար են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու համար: Միննույն ժամանակ, պաշտպանության կողմը ևս սահմանափակված չէ փաստական տվյալներ դատարանին ներկայացնելով:

Դատարանը (պայմանով, որ ներկայացված փաստական տվյալները վերաբերելի են քննվող գործին), դրանք գնահատում է իրենց ամբողջության մեջ՝ վեր հանելով այն հանգամանքները, որոնք այդ ապացույցներով հաստատվում կամ հերքվում են: Դատավարական այս փուլում դատարանը, ինչպես և հետագայում, լիազորված չէ հանդես գալ որպես մեղադրանքի կողմից սուբյեկտ և գնահատման շրջանակներից դուրս թողնել այն փաստական տվյալները, որոնք վկայում են, որ կալանքը անձի նկատմամբ կիրառելի չպետք է լինի: Իսկ այլ կերպ վարվելու դեպքում ստացվում է, որ դատարանը հանդես է գալիս մեղադրանքի կողմում:

Գործնականում, սակայն, առկա է խնդրահարույց հարց անձի իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության տեսանկյունից: Մասնավորապես՝ վարույթն իրականացնող մարմինը կարող է գործում առկա ապացուցողական զանգվածից ընտրել և դատարան ներկայացնել բացառապես այն տվյալները, որոնք հավաստում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու անհրաժեշտությունը:

Նախաքննական փուլում վարույթի մասնավոր մասնակիցը հնարավորություն չի ունենալու ներկայացված ապացույցները համադրել այլ փաստական հանգամանքների հետ կամ վկայակոչել գործում, փաստորեն, առկա մյուս տվյալները, որոնք իր «օգտին» են: Այս դրվագում և դատավարության այս փուլում վարույթն իրականացնող մարմնի բարեխղճությունը և իրավաչափ գործելու նպատակադրությունը էական նշանակություն կարող են ունենալ անձի իրավունքների պաշտպանվածության համար: Նկարագրված խնդիրը որոշակիորեն մեղմված է դատական քննության փուլում կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս:

Հարկ է նաև նկատել, սակայն, որ այն բոլոր դեպքերում, երբ դատավարական հետագա գործընթացների ժամանակ անձը համոզվում է, որ իր նկատմամբ ընտրված կալանքը ակնհայտ ապօրինի բնույթ է ունեցել, վերջինս զրկված չէ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերով իր իրավունքների պաշտպանության:

Այսպիսով՝ ամփոփելով վերը ներկայացված իրավական միջոտրությունը փաստում ենք, որ դատարանը ներկայացված փաստական հանգամանքները քննարկում և դրանց գնահատական է տալիս ամբողջության մեջ: Եթե ներկայացված ապացույցը վերաբերելի է, դատարանի կողմից խնդրահարույց և ոչ իրավաչափ կարող է համարվել այն վարքագիծը, երբ վերջինս անտեսում է ապացույցը պարզապես այն հիմնավորմամբ, որ այն մեղադրյալի «օգտին» է: Նախաքննության փուլում կալանքը ընտրելիս, սակայն, վարույթն իրականացնող մարմնի հայեցողությունը կարող է ընդհուպ վճռորոշ դեր ունենալ անձին ազատությունից զրկելու հարցում՝ հաշվի առնելով այն, որ ապացույցները դատարան ներկայացնում է հենց վարույթն իրականացնող մարմինը, և տեսականորեն այն զրկված չէ սեփական դիրքորոշմանը ձեռնադրած ապացույցները առանձնացնելու հնարավորությունից: Կալանավորման հարցը քննարկելիս հատկապես նախաքննության փուլում, որպես այդպիսին, այլ փաստական տվյալներ կամ առկա չեն, կամ դրանց քանակությունը փոքր է, հետևաբար թեև դրանք պետք է գնահատվեն իրենց ամբողջության մեջ, այնուամենայնիվ ամբողջությունը հիմնականում պայմանավորված է վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացված ծավալով:

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակության՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և 63-րդ հոդվածի 1-ին կետին և 79-րդ հոդվածին համապատասխանությունը.

Դիմողը սույն գործով դիմումի շրջանակներում, ի թիվս այլնի, վիճարկել է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը հետևյալ հարցերի լույսի ներքո.

- *Արդյո՞ք կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի իմաստով «թաքնվում է քննությունից» եզրույթի առումով, կարող է դրվել բացառապես մեղադրյալի կողմից ՀՀ տարածքում չգտնվելու հանգամանքն այն դեպքում, երբ վերջինս իր վերաբերյալ հարուցված քրեական վարույթն իրականացնող մարմնի տրամադրության տակ՝ ՀՀ*

տարածքում և ցանկացած կանչով ներկայացել է նախաքննական մարմին, որից հետո օբյեկտիվ պատճառներով մինչև մեղադրյալ ներգրավվելու մասին որոշում կայացնելը մեկնել է ՌԴ:

• Արդյո՞ք ՀՀ տարածում չգտնվող մեղադրյալը քննիչի կանչով 48 ժամվա ընթացքում վարույթն իրականացնող մարմին ներկայանալու քրեադատավարական պարտականություն ունի, իսկ այդ ժամանակահատվածում չներկայանալը կարող է գնահատվել որպես կալանավորման հիմք՝ փախուստ ամ թաքնվել:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

/.../ 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով.

/.../ գ) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (...):»:

Հարկ է ընդգծել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված կալանքի իրավասության վերանայման իրավունքի շրջանակներում Եվրոպական դատարանը կիրառում է օրինականության և օրենքի

որակական պահանջների նույն չափանիշն ինչ կիրառելի է 7-րդ հոդվածով, մասնավորապես,

«Ինչ վերաբերում է ազատությունից զրկելուն, ապա հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Ուստի կարևոր է, որ ներքաղաքական օրենսդրությամբ հստակորեն սահմանվեն ազատությունից զրկելու պայմանները, և որ օրենքն ինքնին լինի մատչելի և կանխատեսելի, որպեսզի այն համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին, մի ստանդարտ, որը պահանջում է, որ բոլոր օրենքները բավականաչափ ճշգրիտ լինել, որպեսզի անհրաժեշտության դեպքում, համապատասխան խորհրդատվությամբ, թույլ տա անձին կանխատեսել, որքանով դա ողջամիտ է այն հանգամանքներում, թե հետևանքները, որոնք կարող են հանգեցնել սովյալ գործողության»:¹

Սույն պայմաններում առկա է վերը վկայակոչված չափանիշների համաձայն վիճարկվող իրավական դրույթի ողջամտորեն կանխատեսելի լինելու վերաբերյալ հարցադրման պատասխանը, որը կարող է կատարվել այդ թվում նաև օրենսդրական նորմի դատական պրակտիկայի միջոցով մեկնաբանման լույսի ներքո:

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և անձնական ազատության իրավունք:

2. Ոչ ոք չի կարող արգելանքի վերցվել և պահվել անազատության մեջ այլ կերպ, քան սույն օրենսգրքով նախատեսված հիմքերով և կարգով: (...):»:

Նույն օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Դատարանը (...) խափանման միջոց կարող [է] կիրառել միայն այն դեպքում, երբ քրեական գործով ձեռք բերված նյութերը բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ կասկածյալը կամ մեղադրյալը կարող է՝

թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից.

(...):»:

ՀՀ վճռաբեկ դատարանը Տիգրան Պետրոսյանի նկատմամբ հարուցված թիվ ԵԿԴ/0084/06/16 քրեական գործով կայացված որոշմամբ ամփոփելով նախադեպային իրավունքի մեկնաբանման մոտեցումը, նշել է, որ.

Մեջբերված նորմերի վերլուծության շրջանակներում Վճռաբեկ դատարանը մշտապես ընդգծել է անձի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունքի հիմնարար ու անօտարելի բնույթը և հետևողականորեն ամրապնդել ու զարգացրել քրեական դատավարության ընթացքում կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս անձի ազատության իրավունքի կամայական կամ անհիմն սահմանափակումը բացառելուն ուղղված երաշխիքները:

¹ St' u, օրինակ, Khlaifia and Others v. Italy [GC], § 92; Del Río Prada v. Spain [GC], § 125; Creangă v. Romania, § 120; Medvedyev and Others v. France [GC], § 80

Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը կայուն նախադեպային իրավունք է ձևավորել առ այն, որ կալանավորման օրինականության և հիմնավորվածության ապահովման տեսանկյունից կարևոր է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասում թվարկված կալանավորման հիմքերից որևէ մեկի կամ մի քանիսի և կալանավորման պայմանների (հիմնավոր կասկած, քրեական գործի առկայություն, որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայություն և այլն) վերաբերյալ դատական **ակտում ողջամիտ հետևությունների առկայությունը՝ հիմնավորված վարույթն իրականացնող մարմնի կողմից ներկայացվող տեղեկություններով, փաստերով կամ ապացույցներով** (ՎԲ-132/07, ԱՎԴ/0022/06/08, ԼԴ/0197/06/08, ԵԿԴ/0580/06/09, ԵԿԴ/0678/06/10, ՏԴ/0052/06/14, ԵԱԲԴ/0386/06/15 և այլն):

Ավելին՝ հարկ է նկատել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, զարգացնելով իր նախադեպային իրավունքը, Բուզաջին ընդդեմ Մոլդովայի Հանրապետության գործով իրավական դիրքորոշում արտահայտեց այն մասին՝ որ բացի ողջամիտ կասկածի առկայությունից, դատական իշխանություն իրականացնող պաշտոնատար անձի կողմից կալանավորման համար «հիմնավոր» և «բավարար» պատճառներ ներկայացնելու պահանջն արդեն իսկ պետք է կիրառվի նախնական կալանք կիրառելու վերաբերյալ առաջին որոշումը կայացնելու ժամանակ՝ այսինքն՝ ձերբակալելուց «անմիջապես» հետո (տե՛ս, *mutatis mutandis*, *Buzadji v. the Republic of Moldova* [GC]՝ գանգատ թիվ 23755/07՝ 2016 թվականի հուլիսի 5-ի վճիռ, կետեր 87 և 102): Այլ կերպ՝ սկսած այդ պահից անձի կալանավորման հիմքերի առկայությունը վկայող հիմնավորումները պետք է լինեն փաստարկված՝ այն է՝ հիմնված կոնկրետ փաստերի, ինչպես նաև անձը բնութագրող հատկանիշների վրա՝ զերծ ընդհանուր և վերացական բնույթից (տե՛ս, *mutatis mutandis*, *Aleksanyan v. Russia*՝ գանգատ թիվ 46468/06, 2008 թվականի դեկտեմբերի 22-ի վճիռ, կետ 179, *Boicenco v. Moldova*՝ գանգատ թիվ, 41088/05, 2006 թվականի հուլիսի 11-ի վճիռ, կետ 142՝ *Khoudoiron v. Russia*՝ գանգատ թիվ 6847/02, 2005 թվականի նոյեմբերի 8-ի վճիռ, կետ 173, *Piruzyan v. Armenia*, գանգատ թիվ 33376/07, 2012 թվականի հունիսի 26-ի վճիռ, կետ 92):

Վերոգրյալի համատեքստում Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածում թվարկված մեղադրյալի հավանական գործողությունների մասին հետևությունները բոլոր դեպքերում պետք է պայմանավորված լինեն գործի նյութերից բխող որոշ փաստական տվյալներով: Սակայն միևնույն ժամանակ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ կալանավորման հիմք(եր)ի

առկայության կամ բացակայության մասին դատարանի հետևությունները պետք է հիմնված լինեն ոչ թե այդ փաստական տվյալները մեկը մյուսից անջատ, ինքնավար հետազոտման ենթարկելու, այլ դրանք իրենց համակցության մեջ գնահատման ենթարկելու արդյունքում ձևավորվող փաստարկված դատողությունների վրա: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ համապատասխան փաստական տվյալներն իրենց ամբողջության մեջ չվերլուծելը, դրանք իրարից անջատ գնահատելը կարող է հանգեցնել կալանավորման հիմքի առկայության կամ բացակայության մասին չհիմնավորված եզրահանգման գալու: Հետևաբար խնդրո առարկա հարցը լուծելիս դատարանի հետևությունները յուրաքանչյուր դեպքում պետք է հիմնված լինեն գործի նյութերում առկա ապացույցների, փաստերի կամ այլ տեղեկությունների, այդ թվում՝ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման պահից ի վեր մեղադրյալի դրսևորած վարքագծի և նրա անձը բնութագրող այլ հատկանիշների՝ իրենց ամբողջության մեջ գնահատման վրա:

Այսպիսով, Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի առկայության կամ բացակայության մասին դատարանի եզրահանգումը պետք է հիմնված լինի վերը նշված հանգամանքների **փոխազդեցության, հարաբերակցության բացահայտման, այդ հանգամանքների համակցված գնահատման արդյունքում ձևավորված համոզմունքի վրա**, ինչն իր հերթին պետք է արտացոլվի դատարանի կողմից կայացվող դատական ակտում:

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն անդրադարձել է կալանքի կիրառման հարցի լուծման շրջանակներում «թաքնվելու» հավանականության գնահատմանը՝ հատկապես մեղադրյալի՝ ՀՀ սահմաններից դուրս գտնվելու պայմաններում: Մասնավորապես, Վալերի Հակոբյանի նկատմամբ հարուցված թիվ ԵԴ/0548/06/19 քրեական գործով կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է հետևյալը.

«Վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու համատեքստում պատշաճ ծանուցված լինելու հանգամանքի առնչությամբ Վճռաբեկ դատարանը կրկնում է, որ ծանուցագիրը ստանալու փաստը հաստատող տվյալի բացակայության դեպքում ծանուցման պատշաճ լինելու հարցը լուծելիս անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ խնդրո առարկա հարցի լուծման համար: Հակառակ մեկնաբանության դեպքում, երբ վարույթ

իրականացնող մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումները ենթադրյալ հանցանք կատարած անձի՝ օրինակ՝ Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվելու հանգամանքով պայմանավորված չստանալու դեպքում մեխանիկորեն համարվեն ոչ պատշաճ, ապա կարող է արհեստականորեն խոչընդոտվել նրանց հայտնաբերմանն ուղղված դատավարական հարկադրանքի միջոցների գործադրումը և անհնարին դառնալ պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի կենսագործումը:

Վերը վկայակոչված իրավական նորմերի՝ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական վերլուծության լույսի ներքո համադրմամբ, կարելի է վեր հանել հետևյալը.

- «թաքնվում է քննությունից» եզրույթի մեկնաբանումն ու կիրառումը բացառապես պետք է հիմնվի տվյալ գործի փաստական տվյալների և ապացույցների համակցությամբ կատարված համալիր եզրակացության վրա, այն չի կարող հիմնավորվել միմիայն մեկ փաստական հանգամանքի կամ ապացույցի, այդ թվում նաև՝ անձի ՀՀ տարածքում չգտնվելու հանգամանքի, հաշվառմամբ,
- անձի կողմից քննությունից թաքնվելու վարքագիծ դրսևորելու հանգամանքի գնահատման շրջանակներում ընդհանրապես և հատկապես անձի՝ ՀՀ տարածքում չգտնվելու պայմաններում պետք է ուշադրության արժանանա անձի կողմից՝ վարույթ իրականացնող մարմին ներկայանալու մասին պատշաճ ծանուցման փաստը,
- վարույթ իրականացնող մարմին ներկայանալու փաստի վերաբերյալ պատշաճ ծանուցվելու փաստը հաստատող հանգամանքների բացակայության դեպքում անհրաժեշտ է բազմակողմանի վերլուծության ենթարկել այդ ուղղությամբ համապատասխան մարմինների կողմից ձեռնարկված գործողությունների քանակական և որակական կազմը, ծանուցվող անձի դրսևորած վարքագիծը, ինչպես նաև այլ հանգամանքներ, որոնք կարող են առանցքային նշանակություն ունենալ ինդրո առարկա հարցի լուծման համար:

Վերոգրյալը կիրառելով սույն գործով փաստական տվյալների նկատմամբ հարկ է նշել, որ սույն գործով թեև Դիմողը քննության ներկայանալու պահանջի ներկայացման պահին ՀՀ տարածքում չի գտնվել, սակայն եղել է բավականաչափ տեղեկացված իր նկատմամբ հարուցված քրեական հետապնդման հիմքերի (ինչը Դիմողը նույնպես չի հերքում, նույնիսկ նշում է, որ հետապնդման հնարավոր հիմքերի առկայության մասին իմացել է դեռևս 2018թ. նոյեմբերի 8-ին որպես վկա հարցաքննվելու ընթացքում) և վարույթն իրականացնող մարմնի պահանջի մասին, սակայն մերժել է ներկայանալ քննությանը՝ ի կատարումն իր աշխատանքային պարտականություններին իբրև իր կողմից ՀՀ տարածք վերադառնալը խոչընդոտող օբյեկտիվ հանգամանք:

Ավելին, անդրադառնալով Դիմողի կողմից վկայակոչվող Եվրոպական դատարանի՝ Վասիլիչիուկն ընդդեմ Սուրբովայի կայացված որոշմամբ վերջինս արձանագրել է, որ

«.../ եթե վտանգվում է այնպիսի կարևոր խնդիր, ինչպիսին է անձնակա ազատության իրավունքը, տեղական իշխանությունները պարտավոր են հիմնավոր կերպով ապացուցել, որ կալանքի կիրառումն անհրաժեշտություն է: Այն դեպքերում, երբ իշխանությունները որոշում են անձին մինչև դատաքննությունը կալանավորել այն հիմքով, որ նա կանչով չի ներկայացել քննության, նրանք պետք է համոզվեն, որ համապատասխան անձը պատշաճ կերպով ծանուցվել է եւ բավականաչափ ժամանակ է ունեցել այդ պահանջը կատարելու եւ ողջամիտ միջոցներ ձեռնարկելու համար, ստուգելու համար, որ նա իսկապես թաքնվել է:

Դատարանն այնուհետև հավելում է, որ. Սույն գործով այս պահանջը չէր պահպանվել, քանի որ իշխանությունները շատ ֆորմալ մոտեցում էին որդեգրել դիմումատուին կանչելու հարցում, և երբ դիմումատուն չէր ներկայացել, նրանք հապշտապ հանգել էին այն եզրակացության, որ նա թաքնվում է: Մինչդեռ հարկ է նշել, որ մեղադրյալի կողմից բավարար ժամանակ և միջոցների առկայության հարցի տեսանկյունից Եվրոպական դատարանի կողմից քննված այս գործով փաստական հանգամանքներն էականորեն տարբերվում են սույն գործով փաստական հանգամանքներից: Մասնավորապես, տիկին Վասիլիչիուկը տեղեկացված չէր ոչ միայն քննության ներկայանալու պահանջի, այլև ընդհանրապես իր նկատմամբ քրեական հետապնդման հարուցման վերաբերյալ, ինչը չի կարելի եզրակացնել սույն գործով Դիմողի տիրապետման ներքո գտնվող տեղեկության հաշվառմամբ: Վերջինս թույլ է տալիս եզրահանգելու, որ Դիմողը ուներ բավականաչափ ժամանակ և միջոցներ ներկայանալու քննության համապատասխան պահանջի վերաբերյալ տեղեկանալուց վարույթն իրականացնող մարմնի կողմից սահմանված 48 ժամվա ընթացքում: Հետևաբար, Դիմողի այս փաստարկն անհիմն է և չի կարող որևէ կերպ վկայել օրենքի կամայական մեկնաբանման մասին:

Ինչ վերաբերում է 48 ժամվա ընթացքում քննությանը ներկայանալու պարտականության կատարման ժամկետին, հարկ է նշել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 212-րդ հոդվածի համաձայն անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին քննիչի կողմից որոշումն ընդունելու պահից ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում, սակայն բոլոր դեպքերում ոչ ուշ, քան մեղադրյալի ներկայանալու կամ նրան բերման ենթարկելու օրը, մեղադրանքի առաջադրման պահանջը չի կարող դիտարկվել որպես զուտ վարույթն իրականացնող մարմնի պարտականություն կամ տվյալ անձի՝ քննությանը ներկայանալու պարտականություն: Այս ժամկետը առավելակերպ առաջնորդվում է քննության ողջամտորեն առավել սեղմ ժամկետներում արդյունավետ իրականացման և

հարուցված քրեական գործի շրջանակներում տվյալ անձի՝ որոշակի իրավական կարգավիճակի և համապատասխան պաշտպանության իրավունքների ձեռքբերման նպատակով:

Մինևույն ժամանակ, վերը վկայակոչված իրավական նորմերի մեկնաբանումից ելնելով հարկ է նշել, որ 48 ժամվա ընթացքում քննության ներկայանալու վարույթն իրականացնող մարմնի պահանջն ինքնին չի կարող համարվել որպես անձի կողմից քննությունից թաքնվելու վարքագծի դրսևորում, սակայն վարույթն իրականացնող մարմինը կարող է տվյալ անձի կողմից քննությունից խուսափելու վերաբերյալ եզրակացությունը հիմնավորել այս հանգամանքի վրա՝ գործով այլ փաստական հանգամանքների բազմակողմանի գնահատման լույսի ներքո:

Ելնելով վերոգրյալից, հարկ է փաստել, որ սույն գործով դիմողի նկատմամբ հարուցված քրեական գործով նրա նկատմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի իմաստով «քննությունից թաքնվել» եզրույթի մեկնաբանումը ոչ միայն չի շեղվել տվյալ օրենսդրական դրույթի՝ իրավկիրառ պրակտիկայում ստացած մեկնաբանումից, այլև իրավական օգնություն ստանալու պայմաններում ողջամտորեն կարող էր կանխատեսվել վերջինիս կողմից: Հետևաբար, այս դրույթի՝ իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանման իմաստով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին և 63-րդ հոդվածի 1-ին կետին և 79-րդ հոդվածին:

4. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ, դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանությունը.

Դիմողը սույն դիմումի շրջանակներում վիճարկել է, ի թիվս այլնի, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը հետևյալ հարցերի լույսի ներքո.

- արդյո՞ք մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը 2012-2017թթ., իշխանության ներկայացուցչի գործառույթների չիրականացնելով, կարգադրիչ լիազորություններով օժտված չլինելով, իր ենթակայության տակ ծառայողներ չունենալով, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով հանդիսացել է պաշտոնատար անձ, և արդյո՞ք այս պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 10-ին մասի 4-րդ կետի, 63-րդ հոդվածի 1-ին կետի և 79-րդ հոդվածի դրույթներին,
- արդյո՞ք ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով անձը պետք է օժտված լինի «կազմակերպական» կամ «տնօրինչական», թե՛

«կազմակերպական-տնօրինչական» միաժամանակյա լիազորությամբ որպես «պաշտոնատար անձ» դիտարկվելու համար, և արդյոք այս պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ պետական ծառայության դեմ ուղղված դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 10-ին մասի 4-րդ կետի, 63-րդ հոդվածի 1-ին կետի և 79-րդ հոդվածի դրույթներին,

- արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածն ամբողջությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի պահանջներին՝ հատկապես նկատի ունենալով Լիվիկին ընդդեմ Էստոնիայի (Liivik v. Estonia Application No. 12157/05) գործով ՄԻԵԴ հստակ և միանշանակ դիրքորոշումը,
- արդյոք ՀՀ արդարադատության նախարարի տեղակալին կարող է մեղսագրվել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործություններ կատարելուն ի պաշտոնե դրդելու արարքներ այն դեպքում, երբ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալը ՀՀ ոստիկանության պաշտոնատար անձանց հետ հարաբերություններում չի հանդիսացել պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների հանցակազմի սուբյեկտ:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

ՀՀ Սահմանադրական դատարանն իր բազում որոշումներում արդեն անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը: 2019 թվականի նոյեմբերի 15-ի իր՝ ՄԴՈ-1488 որոշման մեջ հղում անելով մի շարք այլ որոշումների (ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-851, ՄԴՈ-1142, ՄԴՈ-1148, ՄԴՈ-1176, ՄԴՈ-1213, ՄԴՈ-1270, ՄԴՈ-1357, ՄԴՈ-1439, ՄԴՈ-1449, ՄԴՈ-1452, ՄԴՈ-1475), ինչպես նաև վերահաստատելով և զարգացնելով իր նախորդող իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

- 1) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,
- 2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է 16 երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը,
- 3) որոշակիության սկզբունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն Մահմանադրության 79-րդ հոդվածում՝ որպես հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակող օրենքներին ներկայացվող բովանդակային պահանջ, այլև՝ որպես օրինականության սկզբունքի հիմնարար բաղադրիչ, ըստ որի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտեր ընդունելուն լիազորող նորմերը պետք է համապատասխանեն իրավական որոշակիության պահանջներին (Մահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասություն),
- 4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացվածության աստիճանը,
- 5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,
- 6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմատեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք,

իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը։²

ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները չեն կարող գերազանցել Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

Սույն պայմաններում անհրաժեշտ է անդրադառնալ իրավական որոշակիության սկզբունքին առնչվող՝ ինչպես ներպետական նախադեպային իրավունքի դրույթներն, այնպես էլ անդրադարձ կատարել ՀՀ կողմից վավերացված Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի դրույթների՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումներում կատարված մեկնաբանությանը:

Մասնավորապես, Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն *inter alia*՝

Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ նաև՝ Եվրոպական դատարանը) մի շարք նախադեպային որոշումներում ձևավորել է իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ կայուն իրավակիրառ պրակտիկա: Մասնավորապես, ի թիվս այլոց *Cantoni v. France* գործով կայացված որոշմամբ Եվրոպական դատարանը, մեկնաբանելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածը, նշել է.

«.../հանցագործություններն ու համապատասխան պատիժները պետք է հստակ սահմանվեն օրենքով: Այդ պահանջը բավարարվում է այն դեպքում, եթե անձը կարող է տեղեկանալ համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում՝ դատարանների կողմից այն մեկնաբանելու միջոցով եւ համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալուց հետո, ինչ գործողություններ եւ անգործություն կհանգեցնի քրեական պատասխանատվությանը ենթարկվելուն եւ ինչ պատիժ է նրան սպառնում այդ կապակցությամբ»:³

Մի շարք նախադեպային որոշումներում անդրադառնալով 7-րդ հոդվածի իմաստով «օրենքի» հասկացությանը ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ.

² Տե՛ս ՄԴՈ-1546 որոշմամբ կատարված ամփոփումը:

³ Տե՛ս *Cantoni v. France*, 15 November 1996, § 29, Reports of Judgments and Decisions 1996-V, and *Kafkaris v. Cyprus*, § 140

«Օրենքի» մասին խոսելիս 7-րդ հոդվածը ակնարկում է նույն գաղափարը, ինչին Կոնվենցիան հղում է կատարում այլուր այդ արտահայտությունն օգտագործելիս, մի հասկացություն, որը ներառում է օրենսդրությունը և դատական պրակտիկան և ենթադրում է որակական պահանջների, մասնավորապես՝ մատչելիության և կանխատեսելիության պահանջների բավարարումը»:⁴ Այս որակական պահանջները պետք է բավարարվեն ինչպես հանցագործության, այնպես էլ հանցագործության համար նախատեսված տույժի սահմանման շրջանակներում:⁵

Եվրոպական դատարանն ամփոփելով դատական պրակտիկայում տեղ գտած իրավական մեկնաբանություններն ընդգծել է, որ.

«Դա այն սկզբունքի տրամաբանական հետևանքն է, որի համաձայն օրենքները պետք է կիրառվեն ելնելով այն դրույթից, որ նորմերի ձևակերպումը միշտ չէ, որ ճշգրիտ է: Կանոններով կարգավորման ստանդարտ տեխնիկայից մեկը՝ ընդհանուր դասակարգումների օգտագործումը՝ ի հակադրում սպառիչ ցուցակների: Ըստ այդմ, շատ օրենքներ անխուսափելիորեն մշակվում են այն իմաստով, որոնք ավելի կամ պակաս չափով անորոշ են, և որոնց մեկնաբանությունն ու կիրառումը պրակտիկայի խնդիր են:⁶ Որքան էլ հստակ ձևակերպված լինի իրավական դրույթը, իրավունքի ցանկացած համակարգում, ներառյալ քրեական օրենսդրությունը, **առկա է դատական մեկնաբանության անխուսափելի տարր:** Միշտ կասկածելի կետերը **պարզաբանելու և փոփոխվող հանգամանքներին հարմարվելու անհրաժեշտություն կլինի:** Կրկին, չնայած որոշակիությունը շատ ցանկալի է, այն կարող է իր գնացքում առաջացնել չափազանց կոշտություն, և օրենքը պետք է ի վիճակի լինի համընթաց քայլել փոփոխվող հանգամանքների հետ:⁷

Դատարաններին վերապահված դերը, հենց նրանում է, որ փարատեն բոլոր մնացյալ մեկնաբանման կասկածները (*ibid.*): Դատական իրավաստեղծ գործունեության միջոցով քրեական իրավունքի պրոգրեսիվ զարգացումը Կոնվենցիայի մասնակից պետություններում լավ արմատավորված եւ իրավական ավանդույթի անհրաժեշտ մասն է⁸. Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող մեկնաբանվել որպես քրեական պատասխանատվության նորմերի դատական պրակտիկայի միջոցով՝ *case by case*, աստիճանական պարզաբանումն արգելող դրույթ՝ պայմանով, որ **արդյունավետ զարգացումը համապատասխանում է**

⁴ St' u Kokkinakis v. Greece §§ 40-41; Cantoni v.. France, § 29; Coëme and Others v. Belgium, § 145; և E.K. v. Turkey, no. 28496/95, § 51, 7 February 2002

⁵ St' u Del Río Prada v. Spain [GC], § 91; S.W. v. the United Kingdom, § 35

⁶ St' u Kokkinakis, cited above, § 40, and Cantoni v. France, § 31

⁷ St' u Kafkaris, cited above, § 141

⁸ St' u *Kruslin v. France*, 24 April 1990, § 29, Series A no. 176-A

հանցագործության էությանը և կարող է ողջամտորեն կանխատեսվել.⁹ Մատչելի եւ ողջամիտ կանխատեսելի դատական մեկնաբանության բացակայությունը կարող է հանգեցնել մեղադրյալի՝ 7-րդ հոդվածով ամրագրված իրավունքների խախտման մասին եզրակացության¹⁰. Հակառակ դեպքում, այս դրույթի էությունն ու նպատակը, առ այն, որ ոչ ոք չպետք է ենթարկվի կամայական հետապնդման, դատապարտման կամ պատժի, կխախտվի¹¹:

Ինչ վերաբերում է դատարանների կողմից նորմի մեկնաբանության ողջամիտ կանխատեսելիությանը, Եվրոպական դատարանը Յորգիկն ընդդեմ Գերմանիայի¹² գործով ընդգծել է, որ Դատարանը պետք է գնահատի, թե արդյոք *դիմումատուն կարող էր ողջամտորեն նախատեսել ներկա ժամանակում, անհրաժեշտության դեպքում՝ փաստաբանի օժանդակությամբ, որ առկա է իր կողմից տվյալ հանցագործության համար մեղադրվելու և դատապարտվելու փտանգ*: Չարգացնելով այս տեսակետը, Եվրոպական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ դատարանների կողմից *նորմի մեկնաբանության կանխատեսելիության որոշման շրջանակներում այն պետք է պարզի՝ արդյո՞ք քրեական իրավունքի դատական մեկնաբանությունը պարզապես շարունակել է նախադեպային իրավունքի զարգացման ընկալելի ուղղությունը,¹³ թե դատարանները կիրառել են բոլորովին նոր մոտեցում, որը դիմումատուն չէր կարող կանխատեսել¹⁴:*

Ընդ որում, ելնելով Դել Ռիո Պռադան ընդդեմ Իսպանիայի գործով կայացված որոշման տրամաբանությունից օրենքի նորմի կանխատեսելիությունը պետք է գնահատվի դատապարտված անձի տեսանկյունից (հնարավոր է՝ վերջինս համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալուց հետո) մեղադրանքի կատարման պահին:¹⁵

Այսպես, Պեսսինոն ընդդեմ Ֆրանսիայի գործով Եվրոպական դատարանը մատնանշել էր այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել օրենքի մեկնաբանության կանխատեսելիության շրջանակների և աստիճանի որոշման ժամանակ, այն է.

⁹ Տե՛ս *S.W. v. the United Kingdom*, cited above, § 36; *C.R. v. the United Kingdom*, § 34; *Streletz, Kessler and Krenz v. Germany* § 50; *K.-H.W. v. Germany* [GC], no. 37201/97, § 85, 22 March 2001; *Korbely v. Hungary* [GC], no. 9174/02, § 71, ECHR 2008; և *Kononov v. Latvia* [GC], no. 36376/04, § 185, ECHR 2010)

¹⁰ Տե՛ս (հանցանքի էությունը կազմող տարրերի մասով՝ *Pessino v. France*, no. 40403/02, §§ 35-36, 10 October 2006, և *Dragotoniú and Militaru-Pidhorni v. Romania*, nos. 77193/01 and 77196/01, §§ 43-44, 24 May 2007; ինչ վերաբերում է պատճին, տե՛ս *Alimuçaj v. Albania*, no. 20134/05, §§ 154-62, 7 February 2012:

¹¹ Տե՛ս վերը վկայակոչված *Del Río Prada v. Spain*, §93

¹² Տե՛ս *Jorgic v. Germany*, §§109-113

¹³ Տե՛ս ի թիվս այլոց վերը վկայակոչված *S.W. v. the United Kingdom* և *CR v. the United Kingdom*, application no. 20190/92.

¹⁴ Տե՛ս *Pessino v. France*, § 36; *Dragotoniú and Militaru-Pidhorni v. Romania*, § 44; *Del Río Prada v. Spain*, §§ 111-117; *Arrozpide Sarasola and Others v. Spain*, §§ 124-130, վերջինս վերաբերում է առանձին վճիռ, որը չի հիմնավորվել որևէ դատական պրակտիկայով, որը կարող էր օրինական սպասելիքներ ներշնչել դիմումատուներին, որին մի քանի ամիս անց հաջորդեց գերագույն դատարանի կողմից կայացված վճիռը, որով այլ կերպ որոշվեց վիճարկվող հարցը:

¹⁵ Տե՛ս Վերը վկայակոչված *Del Río Prada v. Spain* [GC], §§ 112 and 117

*«Դատարանը նշում է, որ կանխատեսելիության հասկացության շրջանակները զգալիորեն կախված են **խնդրո** առարկա գործիքի բովանդակությունից, այն ոլորտից, որը նախատեսվում է ծածկել, և այն անձանց թվից և կարգավիճակից, որոնց նորմը հասցեագրված է: Մասնագիտական գործունեություն իրականացնող անձինք պետք է զգուշորեն ցուցաբերեն իրենց զբաղմունքը հետապնդելիս, և ակնկալվում է, որ նրանք հատուկ **խնամք կներկայացնեն նման գործունեության ռիսկերը գնահատելու հարցում:**»¹⁶*

Ավելին՝ Լիվիլին ընդդեմ Էստոնիայի գործով կայացված որոշմամբ Դատարանը արձանագրել է օրենքի կանխատեսելիության պահանջի ռապահպանման հիմքով դիմողի՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված իրավունքի խախտումն այդ թվում առ այն, որ *«.../ գործող օրենքի մեկնաբանման արմատական փոփոխությունը նաև ցույց է տալիս դրա անբավարար հստակությունն ու **կանխատեսելիությունը:**»¹⁷*

Սույն պայմաններում, վիճարկվող օրենսդրական դրույթների՝ ՀՀ սահմանադրությանը և հետևաբար իրավական որոշակիության պահանջին համապատասխանելու հարցի լուծման կապակցությամբ անհրաժեշտ է դիտարկել նորմի հասցեատիրոջ կողմից ներկա պայմաններում և ենթադրյալ հանցագործության կատարման պահին վիճարկվող նորմի կանխատեսելիության հնարավորությունը, այդ թվում նաև՝ վիճարկվող դրույթի՝ ներպետական դատարանների կողմից տրված մեկնաբանման լույսի ներքո:

Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

¹⁶ St' u Pessino v. France, no. 40403/02, § 33, 10 October 2006

¹⁷ St' u Liiivik v. Estonia, Application no. 12157/05, § 102, 25 June 2009

Նույն հոդվածի 3-րդ մասը սահմանում է հանցագործության սուբյեկտ հանդիսացող «պաշտոնատար անձ» հասկացության շրջանակները, այն է.

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ գործերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի դատական պրակտիկայում մեկնաբանման շրջանակներում, անհրաժեշտ է վկայակոչել ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԼԴ/0207/01/12 քրեական գործով կայացված որոշմամբ սույն նորմի ընդհանուր ձևակերպմամբ պայմանավորված կատարված իրավական վերլուծությունն ու եզրակացությունն առ այն, որ.

«Մեջբերված քրեաիրավական դրույթի վերլուծությունից հետևում է, որ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնում են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում պաշտոնավարող այն անձինք, ովքեր իրենցից ծառայական կախվածություն չունեցող, իրենց ծառայողական ենթակայության տակ չգտնվող անձանց նկատմամբ սահմանված կարգով օժտված են կարգադրիչ լիազորություններով:

Կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող են համարվում այն պետական ծառայողները, ովքեր ղեկավարում են իրենց ենթակայության տակ գտնվող ծառայողների գործունեությունը: Այս առումով պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության հատուկ սուբյեկտ է հանդիսանում յուրաքանչյուր պետական ծառայող, ով իր ենթակայության տակ այլ ծառայողներ ունի, ղեկավարում է նրանց գործունեությունը:

Վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պետական ծառայողներն այն անձինք են, ովքեր օժտված են գույքի, նյութական արժեքների տնօրինման, կառավարման լիազորություններով, մասնավորապես, գույքի, նյութական արժեքների պահպանության, վերամշակման, նյութական արժեքների իրացման նկատմամբ հսկողության սահմանման, դրամական միջոցների ստացման, հանձնման և այլ գործառույթներով:

Վճռաբեկ դատարանը հարկ է համարում ընդգծել նաև, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողներին պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ դիտելու

համար էական նշանակություն ունի նաև այն հանգամանքը, թե արդյոք նրանք օժտված են իրավական նշանակություն ունեցող, իրավահարաբերություններ առաջացնող, դադարեցնող կամ փոփոխող գործողություններ կատարելու լիազորությամբ: Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ է այն պետական ծառայողը, ով իրավունք ունի պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության անունից պաշտոնական փաստաթուղթ տրամադրել քաղաքացիներին և դրանով կարգավորել նրանց վարքագիծը:

Ջուտ մասնագիտական գործառույթներ իրականացնող՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ծառայողները պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ չեն հանդիսանում: Սակայն, եթե նշված անձինք օժտված են նաև կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական լիազորություններով, ապա, այդ լիազորություններն իրականացնելիս հանդիսանում են պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտ:

Հինք ընդունելով վերոշարադրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պարզելու համար, թե արդյոք անձը հանդիսանում է պաշտոնական անփութության հանցակազմի սուբյեկտ, անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե արդյոք նա իրականացնում է իշխանության ներկայացուցչի կամ կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառույթներ, ինչ իրավական ակտով սահմանված, ինչ կոնկրետ պարտականությունների կատարում է նրա վրա դրված:»

Ելնելով վերոգրյալից՝ նախ անհրաժեշտ է հստակեցնել՝ արդյոք սույն գործի փաստական տվյալների հաշվառմամբ պետք է գնահատել, թե արդյոք ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասին դատական իրավաստեղծ պրակտիկայի միջոցով տրված մեկնաբանության պայմաններում դիմումատուն կարող էր ողջամտորեն նախատեսել իր կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության կատարման համար մեղադրվելու և դատապարտվելու վտանգը, ինչպիսի պայմաններում առաջին հերթին պետք է անդրադարձ կատարել այն հարցին, թե արդյոք 308-րդ 3-րդ հոդվածին տվյալ գործի շրջանակներում տրված դատական մեկնաբանությունը պարզապես շարունակել է նախադեպային իրավունքի զարգացման ընկալելի ուղղությունը, թե դատարանները կիրառել են բոլորովին նոր մոտեցում, որը դիմումատուն չէր կարող ողջամտորեն կանխատեսել:

Այսպես, անդրադառնաք այն հանգամանքին, թե նախադեպային իրավունքում վիճարկվող նորմի մեկնաբանումը ինչպիսի ողջամիտ ակնկալիքներ կարող էր առաջացնել դիմողի մոտ նրա կողմից վերոհիշյալ երկու պաշտոնների զբաղեցման ուժով

ձեռք բերված իրավական կարգավիճակի լույսի ներքո՝ կատարելով հետևյալ հարցադրումները.

i արդյո՞ք 2012-2017թթ դրությամբ ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի պաշտոնը զբաղեցնող անձը կարող է դիտարկվել որպես իշխանության ներկայացուցչի, կազմակերպական-տնօրինչական կամ վարչատնտեսական գործառնություններով օժտված անձ:

«Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի մասին» ՀՀ Կառավարության 04.12.2003թ. ընդունված N 1751-Ն որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) 3-րդ կետի համաձայն՝

Ներկայացուցչի աշխատանքները վերահսկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից (այսուհետ՝ նախարար):

Որոշման 5-րդ կետի համաձայն՝

Ներկայացուցիչը՝

ա) զբաղվում է Հայաստանի Հանրապետության դեմ դատարան ներկայացված բողոքներով, դրանց մասին տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին և նախարարին, պատասխանում է այդ բողոքներին՝ դատարանի կողմից սահմանված ժամկետներում.

բ) նախքան դատարանում գործի քննությունը, ինչպես նաև գործի քննության ամբողջ ընթացքում, պետական իրավասու մարմինների հետ խորհրդակցելուց հետո վարում է բանակցություններ կողմի հետ՝ հաշտության համաձայնության (բարեկամական կարգավորման) ձևով խնդրի լուծման համար.

գ) նախքան դատարանում գործի քննությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանը, նախարարին և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարին տեղեկացնում է իր կողմից պատրաստված Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշման մասին և, մասնակցելով դատարանում գործի քննությանը, տեղեկացնում է գործի քննության ընթացքի ու դրա արդյունքների մասին.

դ) դատարանում ներկայացնում և պաշտպանում է Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը.

ե) եթե դատարանն ընդունում է որոշում՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության, որը հանգեցնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման, ապա Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում մանրակրկիտ զեկույց՝ քննության առնելով այդ իրադրությունը, մատնանշելով փոխհատուցման չափը և այն հաստատությունները, որոնց գործունեության հետևանքով խախտվել են մարդու իրավունքների և

հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայով երաշխավորված իրավունքները.

զ) նախարարին ներկայացնում է առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը դատարանում ներկայացնելու նպատակով փաստաբանների և փորձագետների ներգրավելու համար.

է) նախարարին ներկայացնում է առաջարկություն դատարանի կողմից սահմանված փոխհատուցման գումարները վճարելու, ինչպես նաև դատարանում դիրքորոշումը ներկայացնելու համար անհրաժեշտ ծախսերը, այդ թվում՝ ներգրավված փաստաբանների և փորձագետների ծախսերը վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ.

ը) դատարանի որոշումների հիման վրա նախարարին ներկայացնում է առաջարկություն Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ կատարելու կամ նոր օրենքներ ընդունելու և օրենքների կիրառման պրակտիկան կամ պետական մարմինների գործունեության պրակտիկան բարելավելու համար.

թ) Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումը պատրաստելու նպատակով կարող է՝

ստեղծել աշխատանքային խումբ, որի կազմում կարող են ներգրավել մասնագետների, ներկայացուցիչների պետական մարմիններից, գիտական կամ այլ հաստատություններից, տեղական ինքնակառավարման մարմիններից,

պահանջել և ստանալ տեղեկատվություն ու փաստաթղթեր, ինչպես նաև այլ անհրաժեշտ օժանդակություն պետական մարմիններից (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության դատարաններից, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունից), տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ հաստատություններից:

Նշված մարմինները պարտավոր են ներկայացուցիչներ ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տեղեկատվությունը և անհրաժեշտ օժանդակություն՝ ներկայացուցչի նշած ժամկետներում:

Ներկայացուցիչն իր գործառույթներն իրականացնելու նպատակով համագործակցում է Եվրոպայի խորհրդում Հայաստանի Հանրապետության մշտական ներկայացուցչության հետ և կարող է պահանջել ու ստանալ տեղեկատվություն՝ իր իրավասությունների սահմաններում.

ժ) տարեկան մեկ անգամ Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն իր գործունեության մասին.

Ժա) իրավունք ունի խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերին:

Որոշման 8-րդ կետի համաձայն՝

Ներկայացուցիչն ունի տեղակալ, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է նախարարը՝ ներկայացուցչի առաջարկությամբ:

Տեղակալն իրականացնում է ներկայացուցչի լիազորությունները՝ նրա բացակայության ժամանակ կամ լիազորությունները դադարեցվելու դեպքում: Տեղակալի այլ լիազորությունները սահմանվում են ներկայացուցչի կողմից:

Հարկ է նաև ընդգծել, որ 25.11.04 թ. խմբագրությամբ Որոշման «Աշխատակազմ» վերտառությամբ գլուխը ուժը կորցրած է ճանաչվել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի իրավական կարգավիճակը ամրագրող վերը վկայակոչված իրավական նորմերը թույլ են տալիս առանձնացելու հետևյալ հարցադրումները.

1. արդյոք մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն ի պաշտոնե օժտված է կազմակերպական-տնօրինչական գործառույթներով, հաշվի առնելով, որ՝
 - Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն իր ենթակայության ներքո չունի աշխատակազմ,
 - Որոշումը նախատեսում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի տեղակալի պաշտոնը, որը կատարում է ներկայացուցչի աշխատանքը նրա բացակայության ժամանակ կամ լիազորությունները դադարեցնելու դեպքում, այլ կերպ ասած՝ այն դեպքերում, երբ ինքը ներկայացուցիչը չի իրականացնում իր գործառույթները,
 - աշխատանքային խմբի անդամներն ի պաշտոնե պետական մարմիններից, գիտական կամ այլ հաստատություններից, տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչները և այդ հաստատություններում ներգրավված մասնագետներ են, որոնց գործունեությունը վերջինս չի կարող ի պաշտոնե կազմակերպել կամ կառավարել,
2. արդյոք մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչն ի պաշտոնե օժտված է վարչատնտեսական գործառույթներով, հաշվի առնելով, որ՝ ՀՀ կառավարությանը դատարանի կողմից սահմանված փոխհատուցման գումարները վճարելու, ինչպես նաև դատարանում դիրքորոշումը ներկայացնելու համար անհրաժեշտ ծախսերը, այդ թվում՝ ներգրավված փաստաբանների և փորձագետների ծախսերը վճարելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից գումար հատկացնելու վերաբերյալ առաջարկ ներկայացնելը չի կարող դիտարկվել գույքի, նյութական արժեքների պահպանման, տնօրինման կամ կառավարման գործառույթ, քանի դեռ ներկայացուցիչն իրավասու չէ իր հայեցողությամբ և

սեփական պատասխանատվությամբ իրականացնելու գույքի պահպանում, տնօրինում կամ կառավարում,

3. արդյոք մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը կարող է դիտարկվել որպես իշխանության ներկայացուցչի գործառույթների իրականացնող անձ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ

- Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը իր պաշտոնից բխող գործառույթների իրականացման շրջանակներում օժտված չէ կարգադրություն պարունակող իրավական գործիքակազմով,
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցիչը իր պաշտոնից բխող գործառույթների իրականացման շրջանակներում չի կարող տարածել իր իրավասություններն իրականացման շրջանակներում չի կարող իրականացնել այնպիսի գործողություններ, որոնք կարող են պարունակել կարգադրություն ուղղված իր ենթակայության ներքո չգտնվող անորոշ շրջանակի անձանց համար: Ավելին՝ նրա կողմից իր գործառույթների իրականացման շրջանակներում առաջացած իրավական հարաբերությունների բոլոր այլ մասնակիցների շրջանակը նույնպես ամփոփված է Որոշմամբ:

Վերը կատարված հարցադրումները համադրելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության ներկայացուցչի իրավական կարգավիճակը ամրագրող իրավական դրույթներին՝ կարելի է ամփոփել, որ վերջինս 308-րդ հոդվածի 3-րդ մասի դատական մեկնաբանման համաձայն չի հանդիսացել տվյալ հոդվածով նախատեսված հանցակազմի սուբյեկտ:

ii արդյոք դիմողը կարող էր ողջամտորեն կանխատեսել վիճարկվող նորմի իր գործով տրված մեկնաբանումը

Սույն գործի փաստական տվյալների համաձայն՝ Դիմողի՝ որպես մեղադրյալ ներգրավվելու որոշմամբ վարույթն իրականացնող մարմինը վերջինիս դիտարկել է որպես «/.../ 2004թվականի փետրվարի 18-ից մինչև 2017թվականի մայիսի 17-ը զբաղեցնելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի պաշտոնը, հանդիսանալով պետական մարմնում մշտապես կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ»:

ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից տրված իրավական մեկնաբանության շրջանակներում հստակ կանխորոշված են այն վավերապայմանները, որոնց առկայության պայմաններում պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում պետական ծառայողը կարող է դիտարկվել որպես կազմակերպական-տնօրինչական գործառույթներ իրականացնող պաշտոնատար անձ: Հարկ է նշել, որ վերը կատարված վերլուծությունը թույլ է տալիս արձանագրելու, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ կառավարության լիազոր ներկայացուցչի աշխատանքը, այդ թվում նաև ներկայացուցչի բացակայությամբ նրա տեղակալի, աշխատանքները

վերահսկվում են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի կողմից, ինչպես նաև որ նա չունի որևէ աշխատակազմ, իսկ տեղակալը՝ ի պաշտոնե հանդես է գալիս միայն նրա բացակայությամբ, այսինքն՝ նրա կողմից իրավական դեկլարման կամ վերահսկման որևէ գործիքակազմի բացակայության պայմաններում: Հետևաբար, կարելի է եզրահանգել, որ դիմողը կարող էր ողջամտորեն եզրահանգել, որ ի պաշտոնե հանդես գալիս, նա չի հանդիսանում «պաշտոնատար անձ» ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով:

Սույն պայմաններում, հարկ է նշել, որ սույն գործով տեղ է ունեցել տվյալ նորմի՝ իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում մեկնաբանման կտրուկ փոփոխություն, ինչը հանգեցրել է դիմողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի կամայական մեկնաբանմանը:

Գիտավերլուծական կենտրոնի կարծիքով՝ ստեղծված իրավիճակում Դիմողը, նույնիսկ պատշաճ իրավական խորհրդատվություն ստանալու պայմաններում ողջամտորեն չէր կարող կանխատեսել իր գործով իրավակիրառ մարմնի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի՝ դատական իրավաստեղծ գործունեությամբ տրված մեկնաբանմանը չհամապատասխանող իմաստով, ինչը թույլ է տալիս եզրակացնել, որ իրավական որոշակիության սկզբունքի լույսի ներքո վիճարկվող իրավական դրույթը չի համապատասխանում օրենքի կանխատեսելիության որակական պահանջին:

Ամփոփելով վերոնշյալը, գտնում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասը, դրանում նախատեսված «պաշտոնատար անձ» հասկացությանը իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի Դիմողի նկատմամբ դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակության ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանությունը.

Դիմողը սույն դիմումի շրջանակներում վիճարկել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը հետևյալ հարցի լույսի ներքո.

- *Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասը ենթադրյալ հանցագործության հետևանքի նկատմամբ նախատեսում է անզուրկության դրսևորում, արդյոք ՀՀ դատարանների կողմից ստորև ներկայացված փաստական հանգամանքների պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակությունը համապատասխանում է ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի 63-րդ հոդվածի 1-ին կետի, 66-րդ և 79-րդ հոդվածի դրույթներին:*

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

«Յուրաքանչյուր որ ունի անձնական ազատության իրավունք: Ոչ որ չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

/.../ 4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով. (...):»:

Սահմանադրության 63-րդ հոդվածի համաձայն՝

Յուրաքանչյուր որ ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

ՀՀ սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հարկ է մեկ անգամ ևս վկայակոչել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի մեկնաբանման վերաբերյալ Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայում ձևավորված օրենքի մատչելիության և կանխատեսելիության պահանջի վերաբերյալ չափանիշները, և հատկապես՝ օրենքի դատական պրակտիկայի միջոցով մեկնաբանման պայմաններում մեկնաբանման պրոգրեսիվ հանցագործության էությանը զարգացման համապատասխան և ողջամտորեն կանխատեսելի լինելը:¹⁸.

Սույն պայմաններում անհրաժեշտ է նախ վեր հանել վիճարկվող իրավական դրույթի իրավական պրակտիկայի միջոցով տրված մեկնաբանումը: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝

Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝

¹⁸ *St' u S.W. v. the United Kingdom*, cited above, § 36; *C.R. v. the United Kingdom*, § 34; *Streletz, Kessler and Krenz v. Germany* § 50; *K.-H.W. v. Germany* [GC], no. 37201/97, § 85, 22 March 2001; *Korbely v. Hungary* [GC], no. 9174/02, § 71, ECHR 2008; և *Kononov v. Latvia* [GC], no. 36376/04, § 185, ECHR 2010)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Նույն արարքը, որն **անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ**, պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

Անդրադառնալով վիճարկվող հոդվածի 1-ին մասով սահմանված հանցակազմի տարրերին՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Վահան Մարգարյանի նկատմամբ հարուցված թիվ ԳԴ5/0004/01/16 քրեական գործով կայացված որոշմամբ նշել է.

«13.2. Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմն իր մեջ ընդգրկում է երեք պարտադիր հատկանիշ՝

ա) պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը հակառակ ծառայության շահերի օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը,

բ) հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին **էական վնաս հասցնելու ձևով,**

գ) պատճառական կապն արարքի և հետևանքների միջև:

13.3. Պաշտոնեական դիրքի օգտագործումը, նախ, կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայության շահերի իրականացնելով: Պաշտոնատար անձի լիազորությունները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով: Հետևաբար, որպես պաշտոնեական լիազորությունների օգտագործում՝ պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից: Միննույն ժամանակ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ այդ լիազորություններն օգտագործվեն հակառակ ծառայության շահերի, այսինքն՝ կատարվող արարքը չպետք է բխի ծառայողական անհրաժեշտությունից: Ընդ որում, որպես ծառայության շահեր պետք է դիտարկել ոչ միայն այն պետական մարմնի, հիմնարկի, կազմակերպության կամ ձեռնարկության շահերը, որտեղ աշխատում է տվյալ պաշտոնատար անձը, այլև առհասարակ հանրային կառավարման համակարգի շահերը:

Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև պաշտոնից բխող հեղինակությունն

օգտագործելով, երբ պաշտոնատար անձը, իր հեղինակությունն օգտագործելով, ներգործում է մեկ ուրիշ անձի վրա՝ դրդելով նրան հանցանքի կատարման: Այս պարագայում նրա արարքը պետք է որակել որպես համապատասխանաբար պաշտոնական լիազորությունների չարաշահում և այն հանցագործության դրդչություն, որի կատարմանը նա դրդել է:

13.4. Պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանրորեն վտանգավոր հետևանքները: Քննարկվող հանցակազմի դեպքում այդպիսի հետևանք է համարվում անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված **էական վնասը**: Էական վնասը կարող է դրսևորվել ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնասի ձևով:

Այդպիսի վնաս կարող են համարվել մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարումը, իշխանության մարմինների հեղինակագրկումը, նրանց գործունեության խաթարումը, հասարակական կարգի խախտումը, խոշոր չափերի հափշտակությունների կամ այլ ծանր հանցագործությունների պարտակումը և այլն:

Ոչ գույքային վնասի էական լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել քաղաքացիներին, հասարակությանը և պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած քաղաքացիների քանակը, ոտնահարված իրավունքների ու ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության նորմալ գործունեության խաթարման աստիճանը և այլն:

13.5. Պաշտոնական լիազորությունների չարաշահման հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով: Ընդ որում, նշված հանցանքը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ:

Պաշտոնական լիազորությունների չարաշահման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում որպես այդպիսին նշված են շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը:

Պաշտոնական լիազորությունները չարաշահելը՝ շահադիտական շարժառիթից ելնելով, որպես կանոն, դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու համար կատարելով:

Անձնական այլ շահագրգռվածությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով: Դրա հիմնական դրսևորումներն են ապօրինի վարքագծի վրա հիմնվող կարիերիզմը, հովանավորչությունը, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, փոխադարձ ծառայությունն ստանալու, տեղի ունեցած իրավախախտումներն ու հանցագործությունները թաքցնելու ցանկությունը և այլն: Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև ծառայության շահի կեղծ ընկալումը, երբ պաշտոնատար անձն արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքնաշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Բայց, եթե նման դեպքերում, պաշտոնատար անձի արարքը հակասում է առհասարակ հանրային կառավարման համակարգի բնականոն գործունեության շահերին, ապա քննարկվող հանցակազմն առկա է:

Խմբային շահագրգռվածությունը կարող է դրսևորվել անձանց միավորումների շահերը պաշտպանելու ցանկության ձևով:

13.6. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով քրեական պատասխանատվություն է նախատեսվում **ծանրացնող հանգամանքներում** պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար: Որպես ծանրացնող հանգամանք նախատեսված է **անզգուշությամբ ծանր հետևանքներ առաջացնելը:**

Հարկ է նշել, որ «ծանր հետևանքներ»-ն արժեքավորվող հասկացություն է: **Ծանր հետևանքներ կարող են համարվել** մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները, խոշոր արտադրական կամ այլ բնույթի վթարը, տրանսպորտի աշխատանքի կամ արտադրական գործընթացի երկարատև խափանումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, հիմնարկների ու ձեռնարկությունների աշխատանքի կազմալուծումը, առանձնապես խոշոր չափերի նյութական վնասը, մարդու մահը կամ առողջությանը ծանր վնաս հասցնելը և այլն:

13.7. Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պաշտոնեական լիազորությունները չարաշահելու հանցակազմը և դրա որակյալ տեսակը նյութական հանցակազմեր են, այսինքն՝ ավարտված հանցագործության առկայությունն օրենսդիրը կապում է հանրորեն վտանգավոր հետևանքի առաջացման հետ: Այլ կերպ, դրանց օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանդիսանում՝ արարքը, հանրորեն վտանգավոր հետևանքը, արարքի ու հետևանքի միջև պատճառահետևանքային կապը:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև պատճառահետևանքային կապի առկայությունը

հաստատելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դեպքում անդրադառնալ հետևյալ հարցերին՝

ա) հանցավորի արարքը ժամանակային առումով նախորդել է հետևանքի (հանցավոր արդյունքի) առաջացմանը, թե՛ ոչ:

բ) հանցավորի արարքն արդյո՞ք հետևանքի առաջացման անհրաժեշտ պայման է (այսինքն, այնպիսի պայման, առանց որի հետևանքը վրա չէր հասնի), թե՛ ոչ:

գ) հանցավորի արարքը տվյալ իրադրության մեջ տվյալ հետևանքն առաջացնելու իրական հնարավորություն պարունակել է, թե հետևանքն առաջացել է նրա արարքի հետպատահականորեն կապված այլ անձի արարքի կամ այլ հանգամանքների ազդեցության արդյունքում:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշի՝ արարքի և հանրորեն վտանգավոր հետևանքի միջև պատճառական կապի առկայության մասին հնարավոր է հետևության հանգել միայն վերոնշյալ երեք հարցերին դրական պատասխան տալու դեպքում: Հակառակ պարագայում, պետք է արձանագրել, որ բացակայում է համապատասխան պատճառական կապը, հետևաբար նաև՝ հանցակազմի օբյեկտիվ կողմը:

Վերը վկայակոչված օրենքի մեկնաբանումը բավարար է եզրակացնելու համար, որ վիճարկվող հոդվածի մեկնաբանման շրջանակներում դիտավորությամբ կատարված արարքը, որը չէր հանգեցրել որևէ ծանր հետևանքների, ենթակա է որակման ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, իսկ նույն արարքի դիտավորությամբ կատարումը, որն անզուրկությամբ հանգեցրել է ծանր հետևանքների՝ նույն հոդվածի 2-րդ մասով՝ որպես որակյալ հանցակազմ:

Մինչև նույն ժամանակ, հանցագործությունների համակցության կանոնների կիրառմամբ, եթե առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքի կատարման դիտավորություն, ինչպես նաև վերջինից բխող ծանր հետևանքների առաջացման նկատմամբ դիտավորություն, ապա կատարված արարքը պետք է որակվի ՀՀ քրեական օրենսգրքի երկու հոդվածների համակցությամբ: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով ծանր հետևանքներ առաջանալու դեպքում ցանկացած մեղքի տեսակի առկայության պայմաններում խախտվում է ոչ միայն հանցագործությունների համակցության տեսական կանոնները, այլև ՀՀ քրեական օրենսգրքի հասարակ և որակյալ հանցակազմերի որակման տրամաբանությունը և խախտվում հանցագործության և պատժի հստակ սահմանման պահանջը՝ տեղ տալով քրեական պատասխանատվության ենթարկվելու հիմքերի կամայական և անկանխատեսելի կիրառմանը:

Այսպես, ՀՀ վճռաբեկ դատարանի վերը վկայակոչված որոշումն ուղղակիորեն բացահայտում է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով

նախատեսված հանցակազմերը՝ շեշտադրվելով հատկապես հասարակ հանցակազմով նախատեսված էական վնաս հանդիսացող հանրորեն վտանգավոր հետևանքների և որակյալ հանցակազմերի միջև առկա հանցակազմի տարրերի տարբերությունը: Վերջինիս պայմաններում անհրաժեշտ է նախ անդրադառնալ նախ Դիմողի փաստարկին առ այն, որ իր նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասը կիրառվել է այն պայմաններում, երբ մեղադրանքի եզրակացությունում նշվում է նրան մեղսագրվում է 308-րդ հոդվածով նշված արարքի կատարման (էական վնասը հասցնելու) դիտավորություն, որը գուցե դրվում է նաև ծանր հետևանքների առաջացման դիտավորությամբ: Արդյունքում կիրառվել է քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ հոդվածը, որի հանցակազմը բացառապես պարունակում է առաջացած ծանր հետևանքների առաջացման նկատմամբ անզուշուրյամբ դրսևորման տարր:

Սույն պայմաններում, ակներև է, որ կատարվել է Դիմողին մեղսագրվող հանցագործության որակման՝ վիճարկվող իրավական դրույթի դատական մեկնաբանումից տարբերվող կերպով: ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքի հստակ մեկնաբանման պայմաններում, Դիմողի նկատմամբ կիրառվել է վիճարկվող հոդվածի՝ հստակ մեկնաբանումից շեղվող իմաստով, որը Դիմողը չէր կարող կանխատեսել նույնիսկ իրավաբանական օգնություն ստանալու պայմաններում: Վերջինս կարող էր վկայել օրենքի դրույթի անորոշության և իրավակիրառ պրակտիկայում վիճարկվող նորմի կամայական մեկնաբանման մասին:

Մինևս նույն ժամանակ, հարկ է նաև անդրադարձ կատարել Դիմողի կողմից մատնանշված որպես էական վնաս և որպես ծանր հետևանքներ նույնաբովանդակ հանգամանքների դիտարկումը: Այս տեսանկյունից չնայած դիմողը չի արձարծել ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածին համապատասխանության հարցը, թերևս մի շարք փաստարկներ վկայում են նրա մասին, որ նա բարձրացնում է նույնաբնույթ հանգամանքների՝ ինչպես որպես էական վնասի, այնպես էլ՝ որպես ծանր հետևանք մեկնաբանելու խնդիրը: Սույն պայմաններում, հարկ ենք համարում անդրադառնալ նաև կրկին դատվելու սահմանադրական արգելքի շրջանակներում վիճարկվող դրույթի՝ դիմողի նկատմամբ հարուցված գործով կիրառմանը:

Մասնավորապես՝ ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի համաձայն՝

- 1. Ոչ ոք չի կարող կրկին դատվել նույն արարքի համար:*
- 2. Սույն հոդվածի 1-ին մասի դրույթները չեն խոչընդոտում գործի վերանայմանը՝ օրենքին համապատասխան, եթե առկա են նոր կամ նոր երևան եկած հանգամանքներ, կամ գործի քննության ժամանակ տեղ են գտել հիմնարար թերություններ, որոնք կարող էին ազդել գործի արդյունքի վրա:*

ՀՀ քրեական դատավարության նույնաբովանդակ 21-րդ հոդվածի մեկնաբանման կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի ձևավորված իրավական դիրքորոշման համաձայն՝

«Մեջբերված իրավադրույթները Վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Դ.Բաբայանի գործով որոշման մեջ, որտեղ իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «(...) նույն արարքի համար կրկին անգամ դատվելու անթույլատրելիության (non bis in idem) սկզբունքը հիմնարար տեղ է զբաղեցնում ՀՀ Սահմանադրությամբ և միջազգային պայմանագրերով երաշխավորված պաշտպանության համակարգում, որի հիմքում ընկած է մեղքը քաված լինելու կանխավարկածը, և այն իրենից ներկայացնում է նույն արարքի համար նույն անձին կրկին քրեական հետապնդման չենթարկելու, չդատապարտելու, չպատժելու երաշխիք: Ընդ որում, «նույն արարքի համար» ձևակերպումը նշանակում է, որ կրկնակի դատապարտման անթույլատրելիության առարկան պետք է ընկալվի ոչ թե հանցանքի իրավական որակման, այլ փաստական նկարագրության իմաստով»:

Այսպես, սույն դիմումի բովանդակությունից կարելի է վեր հանել, որ Դիմողի վերաբերյալ կայացված մեղադրական եզրակացությամբ սահմանված նույնաբովանդակ փաստական հանգամանքներին տրվել է կրկնակի իրավական որակում, ինչպիսի պայմաններում Դիմողի նկատմամբ հասարակ հանցակազմի փոխարեն կիրառվել է որակյալ հանցակազմ: Ասվածը թույլ է տալիս արձանագրելու, որ Դիմողի նկատմամբ մինչև նույն փաստական հանգամանքների կրկնակի իրավական որակման արդյունքում խախտվել է կրկնակի անգամ դատվելու արգելքը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ Դիմողի նկատմամբ կիրառված մեկնաբանմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, 68-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց է:

6. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի և դրա վերաբերյալ ձևավորված իրավական պրակտիկայի՝ ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համապատասխանություն.

Դիմողը վիճարկում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի ՀՀ սահմանադրությանը համապատասխանությունը հետևյալ հարցադրման լույսի ներքո.

- «արդյոք ՀՀ վերաքննիչ քրեական դատարանն իրավասու է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին առաջին ատյանի դատարանի չպատճառաբանված որոշման դեմ բերված բողոքի քննարկման արդյունքում այն չբեկանել և, ստորադաս դատարանի լիազորությունները ստանձնելով, իր

նախաձեռնությամբ կայացվող որոշմամբ առաջին աստիճանի դատարանի փոխարեն ներկայացնել նոր պատճառաբանություններ»:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Հարկ է ընդգծել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածով ամրագրված կալանքի իրավասության վերանայման իրավունքի շրջանակներում Եվրոպական դատարանը կիրառում է օրինականության և օրենքի որակական պահանջների նույն չափանիշն ինչ կիրառելի է 7-րդ հոդվածով, մասնավորապես,

«Ինչ վերաբերում է ազատությունից զրկելուն, ապա հատկապես կարևոր է, որ պահպանվի իրավական որոշակիության ընդհանուր սկզբունքը: Ուստի կարևոր է, որ ներքադաքական օրենսդրությամբ հստակորեն սահմանվեն ազատությունից զրկելու պայմանները, և որ օրենքն ինքնին լինի մատչելի և կանխատեսելի, որպեսզի այն համապատասխանի Կոնվենցիայով սահմանված «օրինականության» չափանիշին, մի ստանդարտ, որը պահանջում է, որ բոլոր օրենքները բավականաչափ ճշգրիտ լինել, որպեսզի անհրաժեշտության դեպքում, համապատասխան խորհրդատվությամբ, թույլ տա անձին կանխատեսել, որքանով դա ողջամիտ է այն հանգամանքներում, թե հետևանքները, որոնք կարող են հանգեցնել տվյալ գործողության»:¹⁹

Սույն պայմաններում առկա է վերը վկայակոչված չափանիշների համաձայն վիճարկվող իրավական դրույթի ողջամտորեն կանխատեսելի լինելու վերաբերյալ հարցադրման պատասխանը, որը կարող է կատարվել այդ թվում նաև օրենսդրական նորմի դատական պրակտիկայի միջոցով մեկնաբանման լույսի ներքո:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի համաձայն՝

1. Գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ: Այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա վերաքննիչ դատարանը պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

¹⁹ St' u, օրինակ, Khlaifia and Others v. Italy [GC], § 92; Del Río Prada v. Spain [GC], § 125; Creangă v. Romania, § 120; Medvedyev and Others v. France [GC], § 80

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով կայացվում է գործն ըստ էության լուծող դատական ակտ, կամ գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մտնում է օրինական ուժի մեջ:

3) քաղաքացիական հայցի մասով ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և այդ մասով հաստատում կողմերի հաշտության համաձայնությունը:

4) մասնակիորեն կամ ամբողջությամբ բեկանում և փոփոխում է ստորադաս դատարանի ակտը, եթե ստորադաս դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

5) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը կամ առանց քննության է թողնում քաղաքացիական հայցն ամբողջովին կամ դրա մի մասը:

2. Գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանը **մերժում է վերաքննիչ բողոքը՝** դատական ակտը թողնելով օրինական ուժի մեջ, կամ **կայացնում է նոր դատական ակտ**, որն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

Որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է վերաքննիչ դատարանի կողմից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

Կալանավորելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը դատարանն ստուգում է ընտրված խափանման միջոցի օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութերն ստանալու օրվանից՝ երեք օրվա ընթացքում:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

Դատական ստուգման արդյունքում դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից որևէ մեկը՝

1) կալանքը որպես խափանման միջոց վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին:

2) որպես խափանման միջոց կալանք ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին:

3) բողոքն առանց բավարարման թողնելու մասին:

Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝

Մյն դեպքում, երբ նիստին ներկայացված չեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, ինչպես նաև կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու օրինականությունը և հիմնավորվածությունը հաստատող նյութեր, դատարանը որոշում է կայացնում տվյալ խափանման միջոցը վերացնելու և անձին կալանքից ազատելու մասին:

Վերը վկայակոչված երկու հոդվածների համադրումից կարելի է եզրակացնել, որ կալանքի հիմնավորվածության և իրավաչափության հարցի լուծման շրջանակներում վերաքննիչ դատարանն օժտված է հստակ սահմանված բնույթի որոշումների կայացմամբ, մասնավորապես, դատարանը՝

1. բավարարում է վերաքննիչ բողոքը՝ կայացնելով նոր դատական ակտ, որով կա՛մ վերացնում է կալանքը՝ որպես խափանման միջոց, կա՛մ ընտրում է կալանքը որպես խափանման միջոց կալանքը կամ երկարացնում դրա ժամկետը,
2. մերժում է վերաքննիչ բողոքը (թողնում առանց բավարարման)՝ օրինական ուժի մեջ թողնելով առաջին աստիճանի դատարանի կայացված դատավճիռը:

Ընդ որում, հիմք ընդունելով 228-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 6-րդ հոդվածների ձևակերպումը, վերաքննիչ դատարանը վերոհիշյալ որոշումներից մեկի կայացման նպատակով կատարում է ընտրված խափանման միջոցի կիրառման հիմնավորվածությունը և իրավաչափությունը հաստատող նյութերի ուսումնասիրում:

Հարկ է վկայակոչել ՀՀ վերաքննիչ և վճռաբեկ դատարանների ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նույնաբովանդակ 394-րդ և 419-րդ հոդվածներով նախատեսված՝ միջանկյալ դատական ակտերի բողոքարկման կապակցությամբ որոշում կայացնելու իրավասության վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի թիվ ՍՈ-1459 որոշմամբ արտահայտած իրավական վերլուծությունն առ այն, որ

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ, տարանջատելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով Վճռաբեկ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում նոր դատական ակտեր ընդունելու պահանջով, օրենսդիրը հետապնդել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ դատավարական շրջապտույտը կանխելու, ընդամին՝ այդ հարցերով վճռաբեկ ատյանում վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ապահովելու նպատակներ:

Մահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այս կարգավորումն ունի կանխարգելիչ բնույթ և ուղղված է **վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքի** տեսանկյունից գործով ըստ էության վերջնական որոշում կայացնելու հիմնական գործառնությունների արաշխարհակարգի արաշխարհակարգի, **ինչը հնարավոր չի լինի իրականացնել գործն ըստ էության չլուծող դատական ակտերի անվերջ վերանայման դեպքում:**

Նույն որոշմամբ դատարանը մանրամասն վերլուծել է կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառման հարցի լուծման շրջանակներում դատական երեք ատյանների իրավասության շրջանակները, ընդգծելով, որ

«/.../ կալանքի կիրառման նկատմամբ դատական վերահսկողության օրենսդրական կարգավորումների բովանդակությունը հիմնականում հանգում է հետևյալին.

1) հաշվի առնելով կալանավորման՝ որպես անձնական ազատությանն առավել ինտենսիվ միջամտության ձևերից մեկի բնույթը՝ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանվել է **առաջին ատյանի դատարանում նախնական դատական վերահսկողություն** կալանավորման իրավաչափության նկատմամբ (Քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդված՝ համակցված 278 և 136-րդ հոդվածների հետ), որը ներառում է.

ա) կալանքը՝ որպես խափանման միջոց, **միայն դատարանի որոշմամբ** կիրառելը (Քրեական դատավարության օրենսգրքի 280-րդ հոդված),

բ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու մասին քննիչի կամ դատախազի միջնորդության **ամբողջական**, այսինքն՝ բոլոր փաստական և իրավական հանգամանքների համակցության մեջ, **քննությունն առաջին ատյանի դատարանում** (Քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 1-ին մաս), մասնավորապես՝ կալանքի հիմնավորվածությունն ստուգելու նպատակով կալանքի վերաբերյալ միջնորդության հիմնավորվածությունն ստուգելու համար անհրաժեշտ փաստաթղթեր և իրենդեն ապացույցներ, ինչպես նաև կալանքի վերաբերյալ միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ պահանջելու լիազորությունների իրականացման միջոցով (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մաս՝ համակցված 283-րդ հոդվածի 3-րդ մասի հետ),

գ) կալանավորման մասին որոշում կայացնելիս մեղադրյալին **գրավով կալանքից ազատելու հարցը լուծելու՝** առաջին ատյանի դատարանի **պարտականությունը** (Քրեական դատավարության օրենսգրքի 137-րդ հոդվածի 4-րդ մաս),

դ) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ միջնորդության **անհապաղ քննությունն** առաջին աստյանի դատարանում (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մաս)։

2) կալանքը որպես խափանման միջոց ընտրելու վերաբերյալ առաջին աստյանի դատարանի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան (Քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մաս), որը՝

ա) **սահմանափակ վերաքննության**, այսինքն՝ **ընդհանուր կարգով** ստուգում է առաջին աստյանի դատարանի որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 1-ին մաս),

բ) ստանալով բողոքը, պարտավոր է **անհապաղ պահանջել կալանավորելու անհրաժեշտությունը հիմնավորող նյութերը և առաջին աստյանի դատարանի որոշումը** (Քրեական դատավարության օրենսգրքի 287-րդ հոդվածի 3-րդ մաս),

գ) հիշյալ նյութերն ստանալու օրվանից հետո՝ Օրենսգրքում հստակ սահմանված **սեղմ ժամկետում՝ 3** օրվա ընթացքում, պետք է որոշում կայացնի առաջին աստյանի դատարանի որոշման վերաբերյալ (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 2-րդ մաս),

դ) կալանավորման օրինականությունը և հիմնավորվածությունն ստուգելու արդյունքում **իրավասու է անմիջականորեն լուծել կալանքի հարցը**, մասնավորապես՝ վերացնել կալանքը և անձին ազատել դրանից (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս), այսինքն՝ կալանավորման իրավաչափությունը գնահատելու մասով Քրեական դատավարության օրենսգրքը կոնկրետացնում է այդ օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակը՝ հատուկ դրույթների **միջոցով առավելագույնս հստակեցնելով** դրանք, ներառյալ այդ հարցով վերաքննիչ դատարանի կողմից **նոր դատական ակտ կայացնելու լիազորության բովանդակությունը և ծավալը**։

3) կալանքի վերաբերյալ վերաքննիչ աստյանի որոշումները կարող են բողոքարկվել Վճռաբեկ դատարան (Քրեական դատավարության օրենսգրքի 403-րդ հոդված և 404-րդ հոդվածի 1-ին մաս), ընդ որում, ի տարբերություն առաջին և վերաքննիչ աստյանների՝ վճռաբեկ աստյանում կալանքի օրինականությունը և հիմնավորվածությունը քննելու համար **սահմանված չեն առանձնահատկություններ**, ինչը նշանակում է, որ՝

ա) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելիս Վճռաբեկ դատարանը լուծում է **ընդհանուր՝ 3-ամսյա ժամկետում** (Քրեական դատավարության օրենսգրքի 414^Ք-րդ հոդվածի 5-րդ մաս),

բ) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ բողոքը բերվում է վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված **ընդհանուր հիմքերով** և ընդունվում է քննության, եթե բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումը **կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար**, կամ **առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում** (Քրեական դատավարության օրենսգրքի 407-րդ հոդված՝ համակցված 414^Ք-րդ հոդվածի հետ),

գ) կալանքի օրինականության և հիմնավորվածության հարցով վճռաբեկ ատյանում քննությունն իրականացվում է **ընդհանուր կարգով՝ ողջամիտ ժամկետում**:

/.../ Այսպիսով՝ օրենսդիրն առաջին ատյանի դատարանի համար սահմանել է կալանավորման իրավաչափությունն ստուգելու ամբողջական լիազորություն և հատուկ ժամկետ, վերաքննիչ դատարանի համար պահպանել է սահմանափակ վերանայման ընդհանուր կանոնը՝ նույնպես սահմանելով հատուկ ժամկետ, ընդ որում՝ ի բացառություն միջանկյալ դատական ակտերի վերանայման համար սահմանված ընդհանուր լիազորությունների (Քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մաս)՝ **կալանավորման իրավաչափությունը վերանայելու համար սահմանել է հատուկ լիազորություններ** (Քրեական դատավարության օրենսգրքի 288-րդ հոդվածի 5-րդ մաս), իսկ Վճռաբեկ դատարանում կալանավորման իրավաչափության հարցով որևէ առանձնահատկություն չի սահմանել:

ՀՀ վճռաբեկ դատարանի լիազորությունների վերաբերյալ վերը կատարված վերլուծության հիման վրա նույն որոշմամբ կատարվել է նաև Մահմանադրության 172-րդ հոդվածի լույսի ներքո վերաքննիչ դատարանի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների կայացման իրավասությանը, այն է.

«1) **վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն** անցվում է Մահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթադրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին ատյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան՝ «որքան ավելի բարձր է

դատական աստյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառույթն է՝ արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ասպահովելու անհրաժեշտությունից,

3) գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայումը՝ ի տարբերություն գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման, կարող է իրականացվել միայնացից զգալիորեն տարբերակված կանոնների համաձայն՝ այն հաշվով, որ պատշաճ կերպով ասպահովվի գործն ըստ էության լուծող դատական ակտերի արդյունավետ և արդարացի քննությունը բոլոր դատական աստյաններում, ուստի և կանխվի այդ հարցերով դատավարական շրջապտույտը և դրա ազդեցությունը բուն արդարադատության արդյունավետության վրա:»

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնելու, որ ՀՀ վերաքննիչ դատարանի կողմից սահմանափակ բնույթի որոշումների կայացման հնարավորությունը պայմանավորված է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքերում, ինչպես նաև սահմանափակելով վերաքննիչ դատարանի լիազորությունները գործն ըստ էության չլուծող դատական ակտերի դեպքում միայն առաջին աստյանի դատարանի դատական ակտն օրինական ուժի մեջ թողնելու և նոր դատական ակտեր ընդունելու պահանջով, օրենսդիրը հետապնդել է գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերաբերյալ դատավարական շրջապտույտը կանխելու, այդ հարցերով վերջնական իրավական դիրքորոշում ձևավորելու և այն ամրագրելու միջոցով դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացումը և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ասպահովելու նպատակներ:

Ավելին, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝

Վերաքննիչ դատարանում բողոքի քննության ժամանակ առաջին աստյանի դատարանում հաստատված փաստական հանգամանքները ընդունվում են որպես հիմք, բացառությամբ այն դեպքի, երբ բողոքում վիճարկվում է որևէ փաստական հանգամանք, և վերաքննիչ դատարանը հանգում է այն եզրակացության, որ տվյալ փաստական հանգամանքի վերաբերյալ եզրակացության հանգելիս առաջին աստյանի դատարանն ակնհայտ սխալ է թույլ տվել: Նման դեպքերում վերաքննիչ դատարանն իրավունք ունի հաստատված համարելու նոր փաստական հանգամանք

կամ հաստատված չհամարելու ստորադաս դատարանի կողմից հաստատված փաստական հանգամանքը, եթե առաջին ատյանի դատարանի կողմից հետազոտված ապացույցների հիման վրա կամ սույն օրենսգրքի 382 հոդվածի երրորդ մասին համապատասխան՝ լրացուցիչ ներկայացված ապացույցներով հնարավոր է հանգել նման եզրակացության:

Վերը բերված հիմնավորումներով և հաշվի առնելով, որ 288-րդ հոդվածի ուժով ՀՀ վերաքննիչ դատարանը վերանայում է կալանքի կիրառման իրավաչափությունը և հիմնավորվածությունը, պահանջված նյութերի անբավարարության դեպքում կայացնել վերաքննիչ բողոքը մերժելու մասին որոշում կայացնելիս որևէ կերպ սահմանափակված չէ առաջին ատյանի դատարանի կողմից կիրառելի օրենքի մեկնաբանմամբ կամ վիճարկվող փաստական հանգամանքի վերաբերյալ հանգած եզրակացության: Ավելին, վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի որոշման օրինական ուժի մեջ թողնելը առաջին ատյանի դատարանի կողմից որևէ փաստական հանգամանքի վերաբերյալ հանգած եզրակացության փոփոխությունը նույնպես բխում է վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքով առաջնորդվելով, քանի դեռ վերաքննիչ դատարանը կալանքի հիմնավորվածությունը և իրավաչափությունը հաստատող նյութերի հիման վրա կարող է լուծել 288-րդ հոդվածով կալանքի որպես խափանման միջոցի կիրառման հարցը:

Սույն գործի փաստական տվյալների համաձայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2019 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ ԵԴ/1236/06/19 որոշմամբ նշել է, որ. *«.../ առաջին ատյանի դատարանը մեղադրյալ Գևորգ Կոստանյանի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելիս, թեև սխալ է պատճառաբանել վիճարկվող դատական ակտը, այնուամենայնիվ բավարարելով միջնորդությունը՝ կայացրել է գործը ճիշտ լուծող դատական ակտ»:*

Ելնելով վերոգրյալից և կիրառելով ողջամտորեն նորմի կանխատեսելիության վերաբերյալ Եվրոպական դատարանի չափանիշները, կարելի է եզրահանգել, որ Դիմողը իրավական օգնություն ստանալու պայմաններում ողջամտորեն ավելի քան կարող էր կանխատեսել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի կիրառումը՝ իր նկատմամբ հարուցված քրեական գործով ՀՀ դատարանների կողմից տրված մեկնաբանությամբ: Նման պայմաններում խոսք չի կարող գնալ վիճարկվող իրավական դրույթի անորոշության և հետևաբար, ՀՀ Սահմանադրությանը չհամապատասխանելու մասին:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ, դատարանների իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակության՝ ՀՀ Սահմանադրության 66, 68 և 79-րդ հոդվածներին համապատասխանությունը.

Դիմողը սույն դիմումի շրջանակներում վիճարկել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 78-րդ հոդվածի 3-րդ մասի համապատասխանությունը Սահմանադրությանը հետևյալ հարցի լույսի ներքո.

«նկատի ունենալով, որ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքը կարող է ընդհատվել բացառապես այն դեպքում, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարել է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք, որը հաստատվել է օրինական ուժի մեջ մտած դատավճռով, արդյոք քրեական գործ հարուցելն ու Գ. Կոստանյանին վաղեմության ժամկետների ընդհատված չլինելու պայմաններում մեղադրանք առաջադրելը և դրա հիման վրա կալանավորումն, որպես խափանման միջոց կիրառելն ու հետախուզում հայտարարելը ՀՀ դատարանների կողմից այս փաստական հանգամանքների պայմաններում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ և 202-րդ հոդվածների համադրությամբ իրավակիրառ պրակտիկայում տրված նշանակությամբ համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝

Յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

4) անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով.

Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝

«Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»:

ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝

«Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դիմողը վիճարկում է ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի դատական մեկնաբանման համապատասխանությունը Սահմանադրությանը՝ վկայակոչելով օրենքի դրույթի ոչ բավարար չափի որոշակիությունը, որը նաև հանդիսանում է մինչև դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճիռը անմեղ դիտարկվելու իրավունքը, ստորև կատարված վերլուծությունը պետք է դիտարկել նաև սույն

կարծիքում մեջբերված Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկայի լույսի ներքո:

Այսպես, վերը բազմիցս նշվել է, որ անձի հիմնարար իրավունքները և ազատությունները սահմանափակող օրենքը պետք է համապատասխանի որակական որոշակի պահանջներին, այն է՝ լինի հասանելի և ողջամտորեն կանխատեսելի: Եվրոպական դատարանի վերը վկայակոչված որոշումները հիմք ընդունելով անհրաժեշտ է նախ վեր հանել վիճարկվող իրավական դրույթի դատական մեկնաբանումը, իսկ այնուհետև պատասխանել այն հարցադրմանը, թե արդյոք Դիմողի նկատմամբ օրենքի տվյալ նորմը իրավակիրառ պրակտիկայում մեկնաբանվել է որպես դատարանների մեկնաբանման ուղղակի շարունակություն, թե՞ հանդիսացել է օրենքի մեկնաբանման կամայական դրսևորում:

Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի համաձայն՝

1. Անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

2. Վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

3. Վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝

Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ առյժմ օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Վերը վկայակոչված հոդվածներից նվազագույնը պետք է վեր հանել հետևյալ իրավական դրույթները.

1. Անձը իր կողմից հանցագործության կատարման փաստի հետևանքները կարող է կրել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռի ուժով,
2. Անձի նկատմամբ քրեական հետապնդման իրականացման վաղեմության ժամկետը ընդհատվում է, եթե միջին ծանրության ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի կատարումը հաստատող դատավճիռն օրինական ուժի մեջ է մտել ենթադրաբար կատարված մեկ այլ հանցանքի ավարտված լինելու պահից սկսած և մինչև այդ հանցանքի կատարման վերաբերյալ դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը:

ՀՀ Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատման համար անհրաժեշտ վավերապայմաններին և ընդհատման բավարար հիմքերի առկայության դեպքում՝ վաղեմության ժամկետի հաշվարկման կարգին: Այսպես, ՀՀ Վճռաբեկ դատարանը Սիրաժ Ղամբարյանի դեմ թիվ ԵՇԴ/0055/01/11 քրեական գործով կայացված որոշմամբ տրվել է վիճարկվող նորմի հետևյալ մեկնաբանումը.

«/.../ նոր կատարված հանցագործությունն ընդհատում է նախկին հանցագործության վաղեմության ժամկետի ընթացքը հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

1. *նախկին հանցագործությունն ավարտվել է և օրենքով դրա համար սահմանված վաղեմության ժամկետը դեռևս չի անցել,*
2. *նոր կատարվածը միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն է:*

Վաղեմության ժամկետի ընդհատվելու դեպքում նախորդ հանցանքի համար ընթացող ժամկետը չեղյալ է համարվում, և հաշվարկը վերսկսվում է նոր հանցագործության ավարտման պահից: Այլ կերպ ասած՝ նոր հանցանքի կատարմամբ նախկին հանցագործության համար նախատեսված վաղեմության ժամկետը չի վերանում, իսկ ինչպես նոր հանցանքի, այնպես էլ նախկին հանցանքի համար օրենքով սահմանված վաղեմության ժամկետները սկսվում են հաշվարկվել նոր հանցանքի ավարտման պահից՝ յուրաքանչյուր հանցագործության համար ինքնուրույն:

*Վերոնշյալ դիրքորոշումը հիմնավորվում է նրանով, որ վաղեմության ժամկետը կապված է կոնկրետ հանցագործության հետ և կրում է ինքնուրույն բնույթ: Այդ պատճառով, եթե անձը միաժամանակ կատարում է երկու կամ ավելի հանցագործություն, **դրանցից յուրաքանչյուրի համար վաղեմության ժամկետը պետք է հաշվարկվի առանձին:** Հետևաբար, հանցագործություններից մեկի համար վաղեմության ժամկետի ավարտի դեպքում անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից այդ հանցագործության համար, սակայն մյուսների համար, որոնց վաղեմության ժամկետները չեն անցել, անձը*

պետք է ենթարկվի քրեական պատասխանատվության ընդհանուր կարգով»:

Մինչև ժամանակ, հարկ է նշել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի բազմաթիվ որոշումներում վաղեմության ժակետի ընդհատման հնարավորության դիտարկման շրջանակներում վերը վկայակոչված կանոնների համաձայն մեկ հանցագործության վաղեմության ժամկետների կասեցման հարցը լուծելիս առաջնորդվել է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար անձի նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռի առկայության հանգամանքով:

Մասնավորապես,

- **Գարիկ Ավետիսյանի նկատմամբ հարուցված թիվ 1-4-123/2007, 74/08 քրեական գործով կայացված որոշմամբ վճռաբեկ դատարանն ամփոփել է, որ «.../ Գ.Ավետիսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով մեղսագրված արարքն ավարտվել է 1996 թվականի հոկտեմբերի 25-ին, վաղեմության ժամկետի ընթացքը չի ընդհատվել և չի կասեցվել, իսկ 2006 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ նրա նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռը չի եղել, հետևաբար Առաջին աստիճանի դատարանի դատավճռի կայացման օրվա դրությամբ, Գ.Ավետիսյանին քրեական պատասխանատվության ենթարկելու` ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերով սահմանված վաղեմության ժամկետն անցել է»;**
- **Անդրանիկ Գրիգորյանի նկատմամբ հարուցված թիվ ԵԿԴ/0180/01/15 քրեական գործով վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ. «.../ Ա.Գրիգորյանի նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը 2016 թվականի հունիսի 4-ի դրությամբ օրինական ուժի մեջ մտած չի եղել, հետևաբար նրան ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով և 34-268-րդ հոդվածի 1-ին մասով քրեական պատասխանատվության ենթարկելու` ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է»;**
- **Հարություն Սարգսյանի նկատմամբ հարուցված թիվ ՇԴ/0172/01/12 քրեական գործով կայացված որոշմամբ դատարանը երզակացրել է, որ. «.../ ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված հանցագործություն կատարելու մեջ Հ.Սարգսյանի մեղքը հաստատող մեղադրական դատավճիռը կայացվել է 2014 թվականի մարտի 12-ին, որը սակայն օրինական ուժի մեջ չի մտել վերաքննիչ բողոքարկման արդյունքում (ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 383-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ Վերաքննիչ դատարանի որոշումը կայացվել է 2014 թվականի օգոստոսի 4-ին: Վերագրյալից հետևում է, որ Հ.Սարգսյանին մեղսագրված ՀՀ քրեական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն ավարտվել է 2014 թվականի ապրիլի 12-ին, այսինքն` այն ժամանակ, երբ գործը գտնվել է Վերաքննիչ դատարանում, և դրա կապակցությամբ որոշում կայացված չի եղել:**

- **Կամո Բալայանի նկատմամբ հարուցված թիվ ԵԱԴԴ/0081/01/16 քրեական գործով** կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը եղրակացրել է, որ. «Սույն որոշման նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական տվյալները գնահատելով սույն որոշման 10-րդ կետում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Կ.Բալայանին ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքն ավարտվել է 2015 թվականի մայիսի 11-ին, իսկ 2017 թվականի մայիսի 11-ի դրությամբ նրա նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել, հետևաբար Կ.Բալայանին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետն անցել է:»
- **Արմենակ Ավագյանի նկատմամբ հարուցված թիվ ԿԴՅ/0038/01/17 քրեական գործով** կայացված որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ. «.../ Ա.Ավագյանին ՀՀ քրեական օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ 2018 թվականի օգոստոսի 19-ի դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել: Հետևաբար, Ա.Ավագյանին քրեական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված վաղեմության ժամկետը դեռևս Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացնելու օրվա դրությամբ անցած է եղել:»
- **Էդգար Շաբոյանի նկատմամբ հարուցված թիվ ԵԿԴ/0190/01/17 քրեական գործով** կայացված որոշմամբ վճռաբեկ դատարանը եզրակացրել է, որ. «.../ Շաբոյանին ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով մեղսագրված արարքի՝ որպես ոչ մեծ ծանրության հանցանքի համար ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված քրեական պատասխանատվության ենթարկելու երկամյա ժամկետը լրանալու օրվա՝ 2019 թվականի մայիսի 10-ի դրությամբ վերջինիս նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճիռ չի եղել:

Նախորդ կետում մեջբերված և վերլուծված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 14-17-րդ կետերում շարադրված իրավական վերլուծության լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ սույն դատական ակտը կայացնելու օրվա դրությամբ Է.Շաբոյանին մեղսագրված՝ ՀՀ քրեական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված հանցանքի համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցել է /.../»:

Վերը վկայակոչված մի շարք գործերով կայացված որոշումներից ելնելով՝ կարելի է եզրակացնել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավակիրառ պրակտիկան քրեական

պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընդհատման հիմք է դիտարկում անձի կողմից միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարումը հաստատող օրինական ուժի մեջ մտած դատավճռի առկայությունը:

Սույն գործի փաստական տվյալների համաձայն Դիմողին մեղսագրվում էն 2008-2009թթ. և 2012-2017թթ. ենթադրաբար կատարված հանցագործությունները, սակայն տվյալ հանցագործությունների կատարումը հաստատող նրա նկատմամբ կայացված և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը բացակայում է: Տվյալ պայմաններում վաղեմության ժամկետի ընդհատման հիմքերը բացակայում են:

Սույն գործով ՀՀ դատարանները հաստատել են, որ Դիմողին մեղսագրվող 2008-2009թթ. հանցագործություններ կատարելուն դրդելու դրվագների համար քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվել է 2012-2017թթ. ընթացքում պաշտոնական կեղծիք կատարելու դրվագով, մինչդեռ վերջին հանցագործության կատարումը դեռևս չի հաստատվել: Հետևաբար, Դիմողի նկատմամբ հարուցված քրեական գործով դատարանները կիրառելով ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասը՝ կտրուկ կերպով շեղվել են ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն դատավարական պրակտիկայից, ինչը հանգեցրել է վիճարկվող իրավական դրույթի այնպիսի մեկնաբանման, որը Դիմողը նույնիսկ իրավական օգնություն ստանալու պայմաններում չէր կարող ողջամտորեն կանխատեսել:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Դիմողի նկատմամբ ՀՀ դատարանների կողմից մեկնաբանումը ՀՀ Սահմանադրության 66-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից խնդրահարույց է:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է, որ.

1. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 66-րդ հոդվածին և 79-րդ հոդվածին՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

2. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասի, 259-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները չեն հակասում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասին և 79-րդ հոդվածին՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

3. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի կիրառմամբ չեն հակասում ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի

4-րդ կետի, 63-րդ հոդվածի 1-ին կետի, 66-րդ և 79-րդ հոդվածի դրույթներին՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը:

4. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 394-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթներն ամբողջությամբ չեն հակասում ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին՝ հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը:

5. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց է:

6. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, հաշվի առնելով իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց է:

7. Թիվ 62202608 քրեական գործով ՀՀ հատուկ քննչական ծառայության ու դատարանների կողմից Գևորգ Կոստանյանի նկատմամբ կիրառված ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթը, հաշվի առնելով նաև իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությունը, ՀՀ Սահմանադրության 66-րդ, 68-րդ և 79-րդ հոդվածներին համապատասխանության տեսանկյունից, խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝

X Lyudvik Davtyan

Լյուդվիկ Դավթյան

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169